

3244

Ulyanovsk
Zyryanovskaya g. r. r. a.

Zu 9.

28

U-56

4. 1913

1913

2010

2001



ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

26

ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԿԻՆ

ԵՕԹԸ ՓՈՂԵՐՈՒՆ ՀՆՉՈՒԻԼԸ

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՏԱՍՏԱՆՆԵՐԸ

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՀԱՏՈՐ Գ.

28
Մ-56

ՏԵՏՐԱԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆ ՆԱՄԱԿԱՑՈՒՆ, ԱՐԿՂ 109

Կալաթա, Կ. ՊՈԼԻՍ

28
V-56

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

ԵՕԹԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1. Դաս — Յայտ. 1. 1-8:

ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԻՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

«Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը, զոր Աստուած անոր տուաւ իր ծառաներուն ցուցնելու ինչ որ շուտով պէտք է ըլլալ. և իր հրեշտակին ձեռքով զրկելով իր Յովհաննէս ծառային իմացուց, 2 — Որ Աստուծոյ խօսքին վկայութիւնը ըրաւ, ու Յիսուս Քրիստոսի վկայութիւնը՝ ինչ որ տեսաւ: 3 — Երանի՛ անոր որ կը կարգայ, ու անոնց որ կը լսեն այս մարգարէութեան խօսքերը, և կը պահեն ինչ որ անոր մէջ գրուած է. վասն զի ժամանակը մօտ է:

4 — Յովհաննէսէ եօթը եկեղեցիներուն՝ որոնք Ասիայի մէջ են, շնորհք և խաղաղութիւն ձեզի՛ Անկէ որ է և որ էր և որ պիտի գայ, ու եօթը Հոգիներէն՝ որոնք անոր աթոռին առջեւ են, 5 — Եւ Յիսուս Քրիստոս հաւատարիմ վկայէն, որ մեռելներուն անդրանիկն է ու երկրի թագաւորներուն իշխանը. անոր որ մեզ սիրեց, ու մեզ իր արիւնովը մեր մեղքերէն լուաց, 6 — Եւ մեզ թագաւորներ ու քահանաներ ըրաւ Աստուծոյ ու իր Հօրը. անոր փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:


7 — Ահա ամպերով կուգայ. ու ամէն աչք պիտի տեսնէ զանիկա, և անոնք որ զանիկա խոցեցին, և անոր վրայ կոծ պիտի ընեն երկրի բոլոր ազգերը: 8 — Այո, Ամէն: Ես եմ Այֆա և Օմէղա, կ'ըսէ Տէր [Աստուած], որ է և որ էր և որ պիտի գայ, Ամենակալը:

1. Յայտնութեան գիրքը որ խօսքերով կը սկսի: — Յայտ. 1. 1ին առաջին նախադասութիւնը: «Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը:» Յայտնութիւն՝ յայտնել կամ վեր հանել իմաստը ունենալով, Յիսուս Քրիստոսի յայտնութիւնը՝ Յիսուս Քրիստոսի յայտնուիլն է: Յիսուս ինք փրկիչ ըլլալով, Անոր յայտնած ու երեւան հանած բաները՝ անպատճառ փրկական գործութեան վերաբերելու են:

2. Աս յայտնութեան բուն ակը ո՞վ է: — Հմր. 1: «Չոր Աստուած Անոր (Յիսուս Քրիստոսի) տուաւ:» Բուն ակը Աստուած է:

3. Աստուած ասիկա ինչ նպատակով Յիսուս Քրիստոսի տուաւ: — Հմր. 1: «Իր ծառաներուն ցուցնելու:»

4. Յայտնութեան պարունակութիւնը ինչ է: — Հմր. 1: «Ինչ որ շուտով պէտք է ըլլալ:»



1131-84 73382

5. Գրիստոս աս յայտնութիւնը որո՞ւ յայտնեց, որո՞ւն միջոցով: — Հմր. 1ին վերջին մասը:

6. Յովհաննէս ի՞նչ ըրաւ: — Հմր. 2: Վկայեց ի՞նչ որ տեսաւ:»

7. Յովհաննէս իր տեսած բոլոր բաները ո՞ր խօսքերով կը հաստատէ: — Հմր. 2: «Աստուծոյ խօսքը» և «Յիսուս Գրիստոսի վկայութիւնը:»

8. Յետոյ անիկա ի՞նչ բացատրութիւնով եկեղեցիին կը ներկայացնէ: — Հմր. 3ին միջին մասը: «Այս մարգարէութեան խօսքերը:»

Ճիշտ միեւնոյն բանը նշանակող սազանազան արտայայտութիւններուն ուշադրութիւն. —

Յիսուս Գրիստոսի յայտնութիւնը, ինչ որ շուտով պէտք է ըլլալ, Աստուծոյ խօսքը և Յիսուս Գրիստոսի վկայութիւնը,

Մարգարէութեան խօսքերը:

Այս յայտարարութիւններուն նայելով, Յայտնութեան գիրքը մարգարէութիւն մըն է, և այս կերպով յայտնուած բաներն ալ Աստուծոյ խօսքը և Յիսուս Գրիստոսի վկայութիւնն են:

9. Յայտնութիւնը Աստուծոյ ի՞նչ նպատակով որ բխեցաւ, նոյն նպատակը իրագործուելու համար՝ Յովհաննէս Աստուծոյ ծառաները ո՞ր խօսքերով կը դրդէ: — Հմր. 3:

Սատանան Աստուծոյ նպատակը միայն այս կէտին մէջ կրնայ խափանել: Աստուած իր գաղտնիքները Գրիստոսի կուտայ. Ան ալ իր հրեշտակը ղրկելով զանոնք՝ իր ծառաներուն՝ մարգարէներուն կը յայտնէ. Սատանան աս քայլերէն և ոչ մէկին կրնայ արգելք ըլլալ: Բայց յայտնութիւն առնող մարգարէներ՝ իրենց յայտնուած Աստուծոյ խօսքը և Յիսուս Գրիստոսի վկայութիւնը՝ երբ Աստուծոյ ծառաներուն կը վկայեն, Սատանան անմիջապէս առաջ կը նետուի և կ'աշխատի որպէս զի անոնց կարեւորութիւն և ուշադրութիւն չի տրուի: Աստուծոյ ծառաները՝ յայտնութիւնով ու մարգարէութիւնով իրենց յայտնուած վկայութիւններուն երբոր կարեւորութիւն չեն տար, Աստուծոյ նպատակը կը խափանուի: Եւ որպէս զի ասանկ չըլլայ, Յովհաննէս աս բաները կարդացողներուն, մտիկ ընողներուն և պահողներուն՝ Աստուծոյ կողմէ մասնաւոր օրհնութիւններ կը ներկայացնէ:

10. Յովհաննէս իր դրդումին իրրեւ հիմ ո՞ր իրողութիւնը կը ներկայացնէ: — Հմր. 3ին վերջին մասը: «Վասն զի ժամանակը մօտ է:»

11. Աս ժամանակը ո՞րն է: — Յայտ. 22. 10—12: «Ամեն մէկուն իր գործին համեմատ հատուցում ընելու» համար Գրիստոսի եկած ժամանակն է: Աս ժամանակը որչափ որ մօտենայ, Յայտնութեան գիրքին ուսումնասիրութիւնն ալ այնչափ կարեւորութիւն կը ստանայ: Եւ մենք յիշեալ ժամանակին գրեթէ եզրին հասած ըլլալով, անոր վերջին աստիճան կարեւորութիւն տալու ենք:

12. Յովհաննէս առաքեալ՝ Աստուծոյ ծառաներուն ցուցնելու համար իր առած յայտնութիւնը որո՞նց կ'ուղղէ: — Հմր. 4ին առաջին մասը: Ուստի, Ասիայի մէջ գտնուող եօթը եկեղեցիներ սա «mos» ըսուած ժամանակին մէջ ապրող բոլոր «Աստուծոյ ծառաները» կը պարունակեն:

13. Ամենէն առաջ անոնց ի՞նչ կը հաղորդէ և որո՞նց կողմէն: — Հմր. 4, 5: Աստուածութեան մէջ յայտնուած երեք անձերուն ուշադրութիւն: Աստուծոյ ծառաներուն շնորհքի ու խաղաղութեան ակը անոնք են:

14. Առաջին անձը ի՞նչպէս կը յայտնէ:

15. Յետոյ հոգին ի՞նչպէս կը նկարագրէ:

16. Յիսուս Գրիստոսը ո՞ր անձնակերպութեամբ կը բացատրէ:

17. Մեզի հանդէպ Յիսուս Գրիստոսի ո՞ր բարիքներուն նայելով Յովհաննէս կը գովէ Անիկա: — Հմր. 5ին վերջին մասը և 6:

18. Անոր երկրորդ գալուստը ի՞նչպէս կը պատկերացնէ: — Հմր. 7:

19. Եւ ուստի Յովհաննէս իր ներքին զգացումը ինչպէս կ'արտայայտէ: — Հմր. 8ին առաջին մասը: «Այո՛, Ամէն:»

20. Աստուածութեան առաջին անձին կողմէ ո՞ր խօսքերը կը ներկայացնէ:

Թէ աս դէպքը անշուշտ պիտի իրականայ: — Հմր. 8: «Ես եմ Այֆա և Օմէղա:» Սկիզբն ու վերջը, սկսողն ու վերջացողը Ան է: Իր Որդիին թանկագին արիւնովը մեզ լուսացողը վերջապէս պիտի ղրկէ զԱյն երկինքէն ու փրկութեան գործը պիտի լրացնէ:

2. Դաս — Յայտ. 1. 9—20:

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

«Ես Յովհաննէս՝ ձեր եղբայրը, և Յիսուս Գրիստոսի նեղութեանը ու արքայութեանը և համբերութեանը մէջ ընկերակիցը, Պատմութեան ըսուած կղզին էի՝ Աստուծոյ խօսքին համար ու Յիսուս Գրիստոսի վկայութեանը համար: 10 — Եւ Կիրակի [Տէրունական] օրը Հոգին իմ վրաս եկաւ, ու ետեւէս մեծ ձայն մը լսեցի փողի ձայնի պէս, որ կ'ըսէր, 11—Ինչ որ կը տեսնես, գիրքի մը մէջ գրէ, ու ղրկէ եօթը եկեղեցիներուն, որոնք Նիսոսի, ու Զմիւռնիայի, և Պերգամոնի, ու Թիւատիրի, և Սարդիկէի, ու Փիլադելիայի, և Լաւդոքիայի մէջ են: 12—Եւ դարձայ այն ձայնը տեսնելու՝ որ ինձի կը խօսէր, ու երբ դարձայ՝ եօթը ոսկեղէն աշտանակներ տեսայ. 13—Եւ եօթը աշտանակներուն մէջ՝ մէկը Որդւոյ մարդոյ նման, պճղնաւոր պատմութեան մը հագած ու կուրծքին վրայ ոսկի գօտի մը կապած. 14—Եւ իր գլուխը ու մազերը՝ բուրդի պէս ձերմակ ու ձիւնի պէս, ու իր աչքերը՝ կրակի բոցի պէս. 15 — Եւ իր ոտքերը՝ ոսկեպղինձի նման, որպէս թէ հնոցի մէջ կրակ դարձած, ու իր ձայնը շատ ջուրերու ձայնի պէս. 16—Եւ իր աջ ձեռքին մէջ եօթը աստղ ունէր, ու իր բերնէն սրած երկբերան սուր մը կ'ելլէր, և իր երեսը արեւու պէս էր՝ որ իր զօրութիւնովը կը փայլի: 17 — Ու երբ տեսայ զանիկա, իր ոտքը ինկայ մեռելի պէս, ու իր աջ ձեռքը իմ վրաս դրաւ ու ըսաւ ինձի, Մի վախճար, ես եմ Առաջինը ու Վերջինը. 18 — Եւ ես կենդանի եմ յաւիտեանս յաւիտենից, և ես ունիմ մահուան ու դժոխքին բանակները: 19—[Ուստի] գրէ ինչ որ կը տեսնես, զայն որ կայ ու զայն որ ետքը պիտի ըլլայ. 20 — Եօթը աստղերուն խորհուրդը՝ զոր իմ աջ ձեռքիս մէջ տեսար, և եօթը ոսկեղէն աշտանակները. այն եօթը աստղերը եօթը եկեղեցիներուն հրեշտակներն են, և եօթը աշտանակները՝ եօթը եկեղեցիներն են:»

- 1. Յովհաննէս ինքզինք Աստուծոյ ծառաներուն ինչպէս կը ներկայացնէ: — Յայտ. 1. 9ին առաջին մասը: Անոնց եղբայր ու Յիսուս Գրիստոսի մէջ եղած բաներուն անոնց հետ ընկերակից:
- 2. Յիսուս Գրիստոսի մէջ, ամենէն առաջ Աստուծոյ ծառաները ի՞նչ բանի մասնակից կ'ըլլան:
- Պատ. — Նեղութեան:
- 3. Յետոյ ի՞նչ բաներու մասնակից կ'ըլլան:

- Պատ. — Թագաւորութեան:
- 4. Թագաւորութեան մասնակից ըլլալու յոյսը՝ նեղութիւն քաջողները ի՞նչ բանի եւս մասնակից կ'ընէ:
- Պատ. — Համբերութեան:
- 5. Աս կանոնին համեմատ, Յովհաննէս իր ո՞ր գտնուիլը կը յայտնէ: — Հմր. 9ին վերջին մասը: Յովհաննէսի՝ Պատմութեան ըսուած կղզին աքսորուելուն պատճառը՝ իր մէջ եղած Աստուծոյ խօսքն ու Յիսուս Գրիստոսի վկայութիւնն էին:

Հմր. 1, 2ին մէջ ցուցուած կերպով, Յովհաննէս իրեն յայտնուած բաներուն հաւատարմօրէն վկայելուն համար նեղութեան մատնուած էր, և Դոմիտիան կայսրին կողմէ յիշեալ կղզին զրկուած: Սակայն, անոր հոն աքսորուելովը, Աստուծոյ խօսքին և Յիսուս Քրիստոսի վկայութեան անոր յայտնուելն ալ չէր կրնար արգելուել:

6. Կիրակի (Տէրունական) օրը անոր վրայ ինչ եկաւ: — Հմր. 10ին առաջին մասը:

7. Կիրակի (Տէրունական) օրը որն է: — Եսա. 58.13: Ծննդ. 2. 1—3: Ելից 20. 8—11: 31. 16, 17: Եզեկ. 20. 12, 20: Կիրակի, այսինքն Տէրունական օրը միայն Տէրոջը վկայութիւնով կրնայ որոշուիլ, և ասիկա ալ Տէրոջը շաբաթն է: Մարդիկ Հայրապետներու կռթնելով, կարգ մը յետքը անծանօթ վկայութիւններուն կ'ապաւինին ու շաբթուան առաջին օրը Կիրակի կամ Տէրունական օր կ'անուանեն, ինչ որ բնաւ ուղիղ չէ:

8. Երբ Յովհաննէսին վրայ Հոգին եկաւ, ետեւէն ինչ լսեց: — Յայտ. 10ին վերջին մասը և 11:

Ասիա՛ այժմու Այտըն նահանգն է: Անոր մէջ գտնուած սոյն եօթը եկեղեցիներ՝ նոյն ատեն այնպիսի վիճակներու ենթարկուած էին որ՝ «Աս մարգարէութեան խօսքեր»ով հրահանգուելով պիտի յանդիմանուէին և պիտի ուղղուէին: Երբ յիշեալ վիճակները ուշադրութիւնով քննենք, պիտի տեսնենք որ՝ մինչեւ աշխարհիս վախճանը՝ Քրիստոսի եկեղեցիին ենթարկուելիք բոլոր պարագաներուն կատարեալ մէկ նմոյշներն են: Անոնց տրուած վկայութիւնն ալ, ամեն ատեն և ամեն տեղ՝ նոյն վիճակին ենթարկուող եկեղեցիներուն կը պատկանի: Ասկէ զատ, երբ կը նայինք Քրիստոսի եկեղեցիին անցուցած 1900 տարուան պատմութեան, կը տեսնենք որ եկեղեցին՝ տարբեր ժամանակներու մէջ, կարգով նոյն եօթը

եկեղեցիներուն մասնայատուկ վիճակներուն ենթարկուած է: Ուրեմն, «Աս մարգարէութեան խօսքերը» սոյն մասնայատուկ եօթը շրջաններուն ալ կը պատկանի: Մէկ խօսքով, եօթը եկեղեցի Քրիստոսի եկեղեցիին մասնայատուկ և ընդհանուր բոլոր պարագաները և բոլոր ժամանակամիջոցը կը նշանակէ:

9. Երբ Յովհաննէս իրեն խօսողը տեսնելու համար դարձաւ՝ ինչ տեսաւ: — Հմր. 12:

10. Եօթը աշտանակներուն մէջ ո՞վ տեսաւ, և ինչ կերպարանքով: — Հմր. 13: Այս անձը բուն Յիսուս ինքն էր: Անոր հանդերձ իր արդարութիւնը կը մատնանչէ, ինչպէս որ գրուած է «Քահանաներդ թող արդարութիւն հագնին»: Սաղմ. 132.9: Կուրծքին վրայ կապած գօտին՝ արդարութիւն, ուղղութիւն ու ճշմարտութիւն կը նշանակէ: Եսա. 11.5: Եփես. 6.14: Աս կերպարանքը մեզի կը յիշեցնէ Քրիստոսի քահանայութեան պաշտօնը:

11. Գլուխն ու մազերը ինչպէս էին: — Յայտ. 1.14ին առաջին մասը: Բաղդատէ Առակ. 16.31ին հետ:

12. Աչքերը ինչպէս էին: — Յայտ. 1.14ին վերջին մասը: Բաղդատէ Երբ. 4.13ին հետ:

13. Ոտքերը ինչպէս էին: — Յայտ. 1.15ին առաջին մասը: Բաղդատէ Երբ. 4.15ին հետ:

14. Ձայնը ինչպէս էր: — Յայտ. 1.15ին վերջին մասը: Բաղդատէ Սաղմ. 93.4ին հետ:

15. Իր աջ ձեռքին մէջ ինչ կար: — Յայտ. 1.16ին առաջին մասը:

16. Բերնէն ինչ կ'ելլէր: — Յայտ. 1.16ին միջին մասը: Բաղդատէ Եսա. 11.4ին հետ:

17. Երեսը ինչպէս էր: — Յայտ. 1.16ին վերջին մասը: Բաղդատէ Եսա. 30.26ին հետ:

18. Աստուծոյ Որդիին այս յայտնութեան Յովհաննէս կրցա՞ւ դիմանալ: — Յայտ. 1.17ին առաջին մասը,

19. Յիսուս զանիկա ինչպէս զօրացուց: — Յայտ. 1.17ին վերջին մասը:
20. Յիսուս իր մասին անոր ինչ ըսաւ: — Հմր. 18:

21. Ինչ պատուիրեց անոր: — Հմր. 19:
22. Եօթը ասողին և եօթը ոսկի աշտանակին խորհուրդը անոր ինչպէս յայտնեց: — Հմր. 20:

Յ. Դաս — Յայտ. 2. 1—7:

ԵՓԵՍՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

«Եփեսոսի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ իր աջ ձեռքին մէջ եօթը ասողերը ունի, ու եօթը ոսկեղէն աշտանակներուն մէջ կը պտտի. 2 — Գիտեմ քու գործերդ և քու աշխատութիւնդ ու քու համբերութիւնդ, և որ չարերուն չես կրնար տանիլ, ու փորձեցիր զանոնք որ կ'ըսեն թէ իրենք առաքեալ են, ու չեն, և գտար թէ ստախօս են. 3 — Ու համբերութիւն ունենալով՝ նեղութիւն կրեցիր իմ անուանս համար ու չթուլցար: 4 — Բայց քեզի դէմ բան մը ունիմ, որ քու առաջուան սէրդ ձգեցիր: 5 — Միաքիչ բեր հիմա ուրկէ որ ինկար, ու ապաշխարէ և քու առաջուան գործերդ ըրէ. եթէ ոչ՝ չուտով կուգամ քեզի, ու քու աշտանակդ իր տեղէն պիտի շարժեմ՝ եթէ չապաշխարես: 6 — Բայց ասիկա ունիս, որ նիկողայոսեանց գործերը կ'ատես, զորոնք ես ալ կ'ատեմ: 7 — Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն. Ան որ կը յաղթէ անոր ուտել պիտի տամ կենաց ծառէն որ Աստուծոյ դրախտին մէջ է:»

1. Եփեսոսի եկեղեցիին եղած վկայութիւնը՝ Յիսուս որո՞ւ ուղղելով գրել կը պատուիրէ: — Յայտ. 2.1: Եկեղեցիին հրեշտակին:

Ծանօթ.— Հրեշտակ բառին Յունարէնը՝ Անկեղոս՝ լրաբեր իմաստը ունի: Եկեղեցիին հրեշտակը՝ եկեղեցիին վրայ Աստուծոյ կողմէ որոշուած տեսուչները կը նշանակէ: Ասոնց պաշտօնը՝ եկեղեցիին Աստուծոյ խօսքին արօտին մէջ արածել է: Գործ. 20.28: Ա. Պետ. 5. 1—4: Եւ անոնց վիճակը եկեղեցիին վրայ անաստիճան մեծ ազդեցութիւն կ'ունենայ որ՝ իրաւքնէ եկեղեցիին հոգեւոր վիճակը անոնցիսին հետ կը բաղդատուի: Աս պատճառով Յիսուս եկեղեցիին ըրած վկայութիւնը անոր տեսութեան ուղղելով կը խօսի: Յայտ. 1. 11ին հետ բաղդատէ:

2. Եփեսոսի եկեղեցիին տրուած վկայութիւնը միայն նոյն եկեղեցիին չպատկանիլը Յիսուս ինչպէս կը յայտնէ: —

Յայտ. 2. 7ին առաջին մասը: «Թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն»: Կարեւոր կէտը ոչ թէ Եփեսոսի գտնուած վայրն է, հապա եկեղեցիին վիճակն է: Եփեսոսի եկեղեցիին վիճակը ունեցող եկեղեցիներուն բոլորը՝ Եփեսոս եկեղեցիին մէջ կը բովանդակուին: Անոր ըսուած վկայութիւնը բոլորին կը վերաբերի:

3. Աս եկեղեցիին Յիսուս ինքզինքն որ հանգամանքով կը ներկայացնէ: — Հմր. 1:

Ծանօթ.— Ինչպէս որ առաջին գլուխին ուսումնասիրութեանը մէջ տեսանք, Յիսուս ոչ թէ մէկ հանգամանքով, հապա շատ մը հանգամանքներով ոսկիէ եօթը աշտանակներուն մէջ կայնող Անձ մըն է: Աս հանգամանքներուն ամենը հաւաքաբար ցոյց կուտան թէ Յիսուս ամեն պարագայի՝ եկեղեցիին վրայ պատրաստ ու կարող Տեսուչ և Իշխան մըն է: Երբ. 7. 28: Եփեսոսի եկեղեցիին վիճակը նկատողութեան առնելով՝ Յիսուս ինքզինք անոնց «Եօթը ոսկեղէն աշտանակներուն

մէջ» պատող կը յայտնէ : Աս ըսել է որ Յիսուս բոլոր եկեղեցիներուն վիճակին կատարեալ գիտակցութիւնը ունեցող կարող Գննիչ մըն է , որով Անոր վկայութիւնը ճշմարիտ և ընդունելի է :

4. Եկեղեցիին գովեստի արժանի բաները Յիսուս ինչպէս կը յայտնէ : — Յայտ. 2. 2, 3 :

5. Անոր դէմ ինչպէս կը վկայէ : — Հմբ. 4 :

Ծանօթ. — Գործ. 19րդ գլուխին մէջ ինչպէս որ գրուած է , Պօղոս առաքեալին ջանք ու ճիգերովը Եփեսոսի մէջ առողջ եկեղեցի մը կազմուեցաւ : Յիսուսի վկայութեանը համեմատ՝ գործի , աշխատութեան , համբերութեան , զգաստ ու արթուն ըլլալուն մէջ , հոգիները փորձելուն մէջ , և ամեն պարագայի՝ գովելի ու գերընտիր վիճակի մը մէջ էր : Պօղոս առաքեալ երբ Եփեսոսի քովէն կ'անցնէր , եկեղեցիին երէցները կանչելով երբ անոնց իր վերջին կտակը կ'ընէր , ապագային եկեղեցիին հանդիպելիք վտանգները խմայնելով դրոշմ զանոնք որ զգաստ ու արթուն ըլլան : Գործ. 20. 17—31 : Կասկած չի կայ որ աս կտակը անոնց վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ . բայց կ'երեւի թէ ժամանակին անցընող առաջուան սէրէն զատուելով առաջուան գործերը չգործել սկսան :

6. Յիսուս ո՞ր խօսքերով եկեղեցիին ապաշխարութեան կը հրաւիրէ : — Յայտ. 2. 5ին առաջին մասը :

7. Երբ ապաշխարութիւն չըլլայ՝ Յիսուս իր ինչ ընելիքը կը խօսի : — Հմբ. 5ին վերջին մասը :

Ծանօթ. — Որքան որ Յիսուս եկեղեցիին անցեալին մէջ ցոյց տուած գեղեցիկ ու հաւատարիմ ծառայութիւնը կը գնահատէ ու կը գովէ , բայց նոյնը ներկայի թերութիւններուն վարագոյր ալ չընէր : Եկեղեցիին արժէքը ոչ թէ անցեալին մէջ ցոյց տուած բաներով կը գնահատուի , հապա ներկայիս մէջ իր տէր եղած բաներովը : Եւ եթէ ներկայ վի-

ճակը չի բարեկարգուի , անցեալին կատարելութիւնը՝ պարծանքի պատճառ չի կրնար ըլլալ : «Ինչ աշտանակը իր տեղէն պիտի շարժեմ :» Եկեղեցիին՝ Յիսուսի համար ցոյց տուած սիրոյ գործերուն մէջ աշխարհին լոյսն է : Սիրոյ գործերուն մէջ տեղի ունեցած անկումին համեմատութիւնով եկեղեցիին լոյսը կը խաւարի , և եթէ անկեղծ ապաշխարութիւնով առջի գործերուն դառնալ չըլլայ , եկեղեցիին լոյսը իրմէ կ'առնուի , ու այլ եւս աշտանակի դերը չի կրնար կատարել :

8. Յիսուս՝ եկեղեցիին գովեստի արժանի ուրիշ մէկ գործը ինչպէս կը յիշէ : — Յայտ. 2. 6 :

Ծանօթ. — Նիկողայոսեաններուն խուրձիկները թէև ծանօթ չէ , բայց կը կարծուի որ Գործ. 15ին մէջ գրուած Երուսաղէմի ժողովին որոշումներուն անսաստողներն են :

9. Յաղթողին ինչ կը խոստանայ Յիսուս : — Յայտ. 2. 7 :

10. Կենաց ծառը առաջ ո՞ւր տեղ էր : — Ծննդ. 2. 8, 9 :

11. Մարդը ինչ պայմանով Եդեմի պարտէզին մէջ պիտի մնար և ուտէր կենաց ծառէն : — Ծննդ. 2. 16, 17 :

12. Մարդը ինչ տեսակ ընթացք մը բռնեց , և արդիւնքը ինչ եղաւ : — Ծննդ. 3. 1-7, 22-24 :

Ծանօթ. — Մարդը՝ օձին խաբէութիւնովը Աստուծոյ հանդէպ իր ունեցած նախկին սէրը թողուց , Աստուծոյ հրամանը զանց ըրաւ , և աս պատճառով՝ կենաց ծառին պարտէզէն՝ այսինքն դրախտէն վանուեցաւ : Մարդուն համար յաղթող ըլլալ՝ առջի սիրոյն դառնալով առջի գործերը գործելն է : Երբ ասիկա ըլլայ , կենաց ծառէն ուտելը կրկին պիտի չնորհուի մարդուն :

13. Կենաց ծառին դրախտը հիմա ո՞ւր տեղ է : — Յայտ. 22. 1-5 :

14. Յաղթողներ ե՞րբ պիտի ուտեն անկէ : — Յայտ. 22. 12-14 :

15. Եփեսոսի եկեղեցիին ու անոր

տրուած վկայութիւնը այլաբանօրէն ո՞ր ժամանակին կրնանք օրինակ բռնել :

Պատ. — Աւետարանի քարոզութեան առաջ բերած առաջին եկեղեցիներուն կրնանք օրինակ բռնել : Յիսուս Բրիստոսի աւետարանին հաւատացողներուն սիրտերը՝ Ս. Հոգիին պարգեւովը Աստուածային սէրով լեցուեցան , և ամեն բանի մէջ կատարեալ ու ամեն պարզեւի մէջ լեցուն էին : Սակայն , ժամանակի տեւողութեան միջոցին , անոնց մէջ խառնակիչներ մտան և զանոնք Յիսուսի վարդապետութիւններէն սկսան զատել : Անօրէնութեան խորհուրդը թէև առաք-

եալներուն առեւտր գործելու վրայ էր , բայց անոնց ժամանակայարմար խրատներուն չնորհիւ անօրէնութիւնը չէր զօրանար : Երբ անոնք մէջտեղէն վերցան , եկեղեցիներու հսկիչներուն ու եկեղեցիներուն մէջ խիստ մեծ անկում առաջ եկաւ : Այնպէս որ Եփեսոսի եկեղեցիին տրուած վկայութիւնը ճիշդ անոնց պատկանող վկայութիւն մը եղաւ :

Եփեսոս՝ գովելի կամ հաճելի իմաստը ունի . անոր նախկին ու վերջին վիճակը՝ առաջին դարուն մէջ ընդհանուր եկեղեցիին առաջին ու վերջին վիճակը կը պատկերացնէ :

4. Պատ — Յայտ. 2. 8—11 :

ԶՄԻՒՆՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

« 8 — Զմիւռնիայի մէջ եղած եկեղեցոյն հրեշտակին գրէ . Այսպէս կ'ըսէ Առաջինը ու վերջինը , որ մեռաւ ու կենդանացաւ . 9 — Գիտեմ քու գործերդ ու նեղութիւնդ և աղքատութիւնդ , (բայց հարուստ ես) ու անոնց հայնոյութիւնը՝ որ կ'ըսեն թէ իրենք Հրեայ են , ու չեն , հապա Սատանայի ժողովք մը : 10 — Բնաւ մի վախճար այն բաներէն զորոնք պիտի կրես . ահա բանասերուն ձեզմէ մէկ քանինքը բանտը պիտի ձգէ որպէս զի փորձուիք , և տասը օր նեղութիւն պիտի ունենաք . մինչեւ ի մահ հաւատարիմ եղիք , ու քեզի կենաց պատկը պիտի տամ : 11 — Ան որ ակամջ ունի , թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն : Ան որ կը յաղթէ , երկրորդ մահէն պիտի չ'ըստուի : »

1. Շարքին մէջ երկրորդ եկեղեցիին ո՞րն է , և վկայութիւնը որո՞ւ ուղղուելով կը տրուի : — Յայտ. 2. 8ին առաջին մասը :

2. Աս եկեղեցիին Յիսուս ինչքինքն ո՞ր անկաններով կը ներկայացնէ : — Հմբ. 8ին վերջին մասը :

Ծանօթ. — Աս անկաններուն մէջ , Զմիւռնիայի եկեղեցիին կեանքի ու յաղթութեան յոյս կայ : «Որ մեռաւ ու կենդանացաւ :» Յիսուս՝ Աստուծոյ կողմը կենալով , Աստուծոյ ճշմարտութիւններուն վկայելուն համար , Աստուծոյ թշնամիներուն կողմէ սպաննուեցաւ , բայց արդարութեան Տէրը անկա մեռելներէն

կենդանացուց և աշխարհին ցուցուց թէ յաղթութիւնը ոչ թէ մահուան մէջ , հապա կեանքի մէջ կը կայանայ : Ասանկ ալ իրենց անձերը Յիսուսի անուանը համար՝ ճշմարտութեան հակառակորդներուն ատելութեան ու յարձակումին յանձնող ու մեռնողները անպատճառ պիտի կենդանանան : «Առաջինը ու վերջինը :» Յիսուս հաւատքը սկսող ու կատարողն է : Երբ. 12. 1 : Ան սկսաւ մեր փրկութեան գործը և Ան պիտի վերջացնէ : Սուրբերուն մահուան դատապարտուիլը՝ թէև երեւութապէս փրկութեան գործը կտրել է , բայց Յիսուս պիտի չի թողու որ իր սկսած գործը մահը վերջացնէ : Ինք Ա-

ուաջինը ու մահը՝ վերջինը չէ, հապաթէ Առաջինը և թէ վերջինը Ինք է: Յիսուսի՝ վերջինը ըլլալը մեռելոց յարութեան յոյսն է:

3. Յիսուս Չմիւռնիայի եկեղեցիին վիճակը ինչպէս կը նկարագրէ: — Յայտ. 2. 9ին առաջին մասը: Չմիւռնիա բառին իմաստը ճիշտ աս վիճակը կը ցուցնէ, այսինքն զմխուս, անուշահոտութիւն: «Քրիստոս իր անձը մեղի համար մատնեց՝ անուշահոտ պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ:» Եփես. 5. 2: Ասանկալ, եկեղեցին՝ նեղութիւններու մէջ Աստուծոյ անուշահոտ պատարագ ու զոհ մըն է:

4. Եկեղեցին ինչպէս կ'ըլլայ որ աղքատ բայց հարուստ կ'ըլլայ: — Եբր. 11. 26: Աղքատ է, ինչու որ աս աշխարհին մէջ Քրիստոսի նախատինքը կը կրէ, և աս նախատինքը զինք ներկայ աշխարհին հարստութիւններէն կը զրկէ: Եբր. 12. 32-35: Բայց նեղութիւններուն առաջ բերած աղքատութեան մէջ եկեղեցին՝ երկինքի մէջ եղած ընտիր ու մնացուն բաներուն փարելով հարուստ կ'ըլլայ: Եկեղեցին՝ այս աշխարհի ան աղքատներն են որ հաւատքի մէջ հարուստ և Տէրը սիրողներուն խոստացուած թագաւորութեան ժառանգներն են: Յակ. 2. 5:

5. Եկեղեցիին մէջ ինչ տեսակ դասակարգի մը գտնուելը կը յայտնէ Յիսուս: — Յայտ. 2. 9ին վերջին մասը: Իսրայէլ Աստուծոյ ժողովուրդն է: Սատանայի ժողովքէն եղող ունէ անձ անոր մէջ մաս ու բաժին չունի: Ամեն ով որ Սատանայի ժողովքէն ըլլալով ինքզինք իսրայէլ կ'անուանէ՝ Աստուծոյ անունին եւ բնակարանին դէմ կը հայտնէ: Ասանկաները Յիսուս կը ճանչնայ, և Յիսուսին աս բանը գիտնալը՝ եկեղեցիին համար մեծ մխիթարութիւն մըն է: Բնավախնալու չենք իբրեւ թէ Սատանային ժողովքը նենգութիւնով Աստուծոյ ժառանգը կրնայ ըլլալ:

6. Չմիւռնիոյ եկեղեցիին համար Յիսուս ինչ տեսակ ապագայ մը կը յայտնէ: — Յայտ. 2. 10: Նեղութիւններով լեցուն փորձութեան ժամանակ մը: Այդ միջոցին եկեղեցին պիտի փորձուի, փորձողը Սատանան պիտի ըլլայ, տասը օրի չափ նեղութիւն պիտի ըլլայ, և այս նեղութեան մէջ զլխաւոր բաներ՝ բանտն ու մահը պիտի ըլլան:

7. Մինչև մահ հաւատարիմ եղողներուն ինչ կը խոստանայ Յիսուս: — Հմր. 10ին վերջին մասը:

8. Աս վկայութեան կարեւորութիւն տրուելու համար՝ ինչ խօսքերով կը շեշտէ: — Հմր. 11ին առաջին մասը:

9. Յաղթողին ինչ ապահովութիւն կուտայ: — Հմր. 11ին վերջին մասը:

10. Երկրորդ մահը ե՞րբ, ո՞ր և որո՞նց պիտի պատահի: — Յայտ. 20. 4-6, 11-15: Բ. Պետ. 3. 7-12: Յաղթողներ՝ Քրիստոսի երկրորդ գալուստ՝ առաջին յարութեան արժանի ըլլալով կենաց պըսակը պիտի առնեն: Իսկ ամբարիշտներ հազար տարուան վախճանին յարութիւն առնելով կրակի լիճը պիտի ձգուին ու պիտի փճանան: Առաջին յարութեան մէջ բաժին ունեցողը երկրորդ մահէն վախ չի կրեր: Երկրորդ մահը միայն ամբարիշտները պիտի կլլէ:

11. Չմիւռնիոյ եկեղեցիին վիճակը՝ եկեղեցական պատմութեան ո՞ր ժամանակին կրնանք յատկացնել:

Պատ. Եփեսոս եկեղեցին քանի որ առաջին այսինքն առաքելական դարը կը պարունակէր, Չմիւռնիայի եկեղեցիին ալ ցոյց տուած ժամանակը երկրորդ դարէն սկսելով մինչև Յ. Տ. 313 կ'երկարի: Աս ատեն էր որ հեթանոս Հռովմէական կառավարութեան սկզբունքները՝ եկեղեցիին մէջ յայտնուած աւետարանական սկզբունքներուն դէմ պատերազմեցան: Հռովմ կ'ըսէր թէ Հռովմէական կառավարութիւնն է բարձրագոյն աստուած և ժողովուրդին ամենաբարձր բարիքը. թէ ամէնը անոր ծառայութիւն ու երկրպա-

գութիւն ընելու է. և թէ անոր թոյլատրած աստուածներէն զատ ու է աստուծոյ ոչ մէկը երկրպագութիւն ընելու է: Մինչդեռ Քրիստոնէութիւնը՝ իբրև բարձրագոյն Աստուած և ամենաբարձր բարիք՝ Աստուածը կը ներկայացնէր սիրտին ու միտքին, ու Հռովմէական կառավարութեան գերութիւնէն կ'ազատէր սիրտըն ու միտքը: Երկրորդ և երրորդ դարերուն մէջ թէև եկեղեցին ասոր համար շատ նեղութիւններու հանդիպեցաւ, բայց ամենասուկալին Յ. Տ. 302-312 տեւող 10 տարիի նեղութիւնն էր: Դիոկղետիանոս կայսր և իր ընկերը՝ Հռովմէական կառավարութեան բարձր դիրքը պահելու համար Քրիստոնէութիւնը փրձայնել մտադրեցին, մանաւանդ արե-

ւելեան եկեղեցիները նեղութեան սաստիկ հնոցէն անցուցին: Այս նեղութիւններու միջոցին, սկզբունքի տէր չեղողներէն շատեր եկեղեցիէն դատուեցան և ծանրութիւնը ճշմարիտ հաւատացեալները կրեցին: Վերջապէս Քրիստոնէութեան սկզբունքները յաղթող հանդիսացան, և Հռովմէական կառավարութիւնը ստիպուեցաւ իր պահանջը ետ առնել: Այնպէս որ, Յ. Տ. 313ին Կոստանդիանոս և Լիկիւնիոս կայսրները միաձայնութիւնով հրատարակեցին թէ՛ Հռովմէական աշխարհին մէջ ամեն մարդ իր ուզած կրօնքին հետեւելու համար բոլորովին ազատ է: Այս կերպով Չմիւռնիա եկեղեցիին ցոյց տուած ժամանամիջոցը լրացաւ:

5. Դաս — Յայտ. 2. 12-17:

ՊԵՐԳԱՄՈՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՆ

« 12 — Եւ Պերգամոնի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ սրած երկբերան սուրը ունի. 13 — Գիտեմ քու գործերդ, և թէ ուր կը բնակիս, այսինքն Սատանայի աթոռին եղած տեղը, ու իմ անունս կը պահես, և իմ հաւատքս չուրացար այն օրերը անգամ՝ որ Անթիոզաս իմ հաւատարիմ վկաս սպանուեցաւ ձեր մէջ, ուր Սատանայ կը բնակի: 14 — Բայց քեզի դէմ քիչ մը բան ունիմ, որ հող Բաղամի վարդապետութիւնը բռնողներ ունիս, որ Բաղակի սորվեցուց իսրայէլի որդիներուն առջև զայթակղութիւն գնել, որպէսզի անոնք կուռքերու զոհուածներ ուսեն ու պոռնկութիւն ընեն: 15 — Այսպէս ալ դուն Նիկողայոսեանց վարդապետութիւնը բռնողներ սնիս զոր ես կ'ատամ: 16 — Ուստի ապաշխարէ. եթէ ոչ չուտով կուգամ քեզի, ու իմ բերնիս սրովը պիտի պատերազմիմ անոնց հետ: 11 — Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն, ով որ կը յաղթէ պահուած մանանայէն ուսել պիտի տամ անոր, ու ձերմակ խիճ մը պիտի տամ անոր, և այն խիճին վրայ նոր անուն մը գրուած, զոր մէկը չգիտիր բայց միայն ան՝ որ կ'ընդունի: »

1. Շարքին մէջ երրորդ եկեղեցին ո՞րն է: — Հմր. 12ին առաջին մասը: Պերգամոն «Բարձրանալ» իմաստը ունի և եկեղեցական պատմութեան մէջ այն ժամանակամիջոցը կը ցուցնէ երբ, ինչպէս նախորդ դասին մէջ յիշեցինք, տասը տարուան սաստիկ նեղութիւնէն վերջ

Կոստանդիանոսի հրովարտակով եկեղեցին ազատեցաւ հալածանքէն եւ սկսաւ աշխարհի մէջ փառաւոր դիրք մը ցոյց տալ: 2. Պերգամոն եկեղեցիին Քրիստոսին քղինք ինչ ածականներով կը յայտնէ: — Հմր. 12ին վերջին մասը: 3. Պերգամոն եկեղեցիին գովեստի

արժանի վիճակը ինչպէս կը նկարագրէ :
Հմբ. 13 :

4. Ան եկեղեցին ինչպէս Սատանային աթոռին եղած տեղը կը գտնուէր :

Պատ. — Եկեղեցին Աստուծոյ աթոռն է, Եր. 14. 21 : Աստուած հոն կը նստի ու կը դատէ (Մաղմ. 82. 1, 6) : Հոն՝ անդամներուն բոլորն ալ՝ եղբայրներ և Եպիսկոպոսներ՝ Աստուծոյ խօսքին սպասուողներն են (Մատթ. 23. 8. Ա. Կորնթ. 4. 1, 2) : Եկեղեցին մէջ հրամայող կամ իշխան ըլլալու համար ու է մէկին արտօնութիւն չէ տրուած (Մատթ. 20. 25, 26) : Բոլորին գործը՝ միայն Աւետարանը Աստուծոյ զօրութիւնով աշխարհին քարոզել է (Մատթ. 28. 18-20) : Հակառակ այսպէս ըլլալուն, եկեղեցին 200 տարիի չափ հեթանոս Հռովմէական կառավարութեան գրկանքներէն անցնելէն վերջ, երբ Հռովմի կայսրը՝ Կոստանդիանոս Քրիստոնէութեան յարգանք յայտնեց, Եպիսկոպոսներու մէջ բուռն տենչ մը արթնցաւ Քրիստոնէութիւնը կառավարութեան պաշտօնական կրօնքը ընելով հեթանոսութեան կողմէ մղուած հալածանքէն յաւիտեանս ազատելու, և Քրիստոնէութիւնը՝ երկրիս մէջ ամենուն վրայ իբրև Աստուածպետութիւն հաստատելու համար : Կոստանդիանոս անոնց այս տենչը իր քաղաքական նպատակներուն ծառայեցնելու համար անոնց երես տուաւ և եկեղեցին կառավարութեան հետ միացաւ : Այս կերպով առաջ եկած կազմակերպութիւնը՝ Սատանային աթոռը եղաւ : Այս վիճակը երթալով զօրացաւ, մինչև որ Յ. Տ. 538ին հաստատուեցաւ Պապական իշխանութիւնը որ է ապստամբութեան կատարելութիւնը : Բ. Թես. 2. 3-8 : Ահաւասիկ Պերգամոն եկեղեցին ասանկ ժամանակի մը մէջ ներկայ եղող եկեղեցին էր : Քրիստոնէութիւնը թէև Սատանային աթոռը եղած էր, բայց հոն կենդանի Աստուծոյ ծառաները Յիսուսի անունը հաստատ կը բռնէին :

5. Յիսուսի հաւատարիմ վկան՝ Անթիպասը որո՞նք կը նշանակէ :

Պատ. — Սատանային աթոռին կազմութեանը դիմադրող ճշմարիտ հաւատացեալները կը նշանակէ : «Անթի» դիմ և «պաս» պապ նշանակութիւնը ունենալով, «Անթիպաս» Պապին դէմ ըսել է : Եպիսկոպոսներուն ձեռակերպած եկեղեցական կառավարութեան դիմադրող ճշմարիտ Քրիստոնեաները թէև խիստ մեծ հալածանք ու նեղութեան ենթարկուեցան՝ բայց Յիսուսի հաւատքը չուրացան :

6. Պերգամոն եկեղեցին դէմ ինչ ըսելիք ունի Յիսուս : — Յայտ. 2. 14 : Բաղամի վարդապետութիւնը բռնողներուն գտնուիլը :

Ծանօթ. — Բաղամի վարդապետութիւնը Թուոց 31. 15, 16 և զլուխ 25ին մէջ գրուած է : Ասիկա հնարելու համար Բաղամը դրողը ազահութիւնն էր : Բ. Պետ. 2. 14, 15 : Բաղամ անիրաւութեան վարձքը այնքան սիրեց որ Աստուծոյ ժողովուրդը անոր փոխարէն ծախեց : Անէժքին բուն ակը Բաղակին ցուցնելով՝ Իսրայէլը անէժքի ենթարկելուն նախքան սորվեցուց անոր : Բաղակ անիկա գործադրելով յաջողեցաւ : Բաղամի վարդապետութիւնը պարզ և որոշ է, այսինքն «կուռքերու զոհուածներէն ուտել» և «պոռնկութիւն ընել» կուռքերուն զոհուածները ուտելուն մէջ մարդ՝ կուռքերուն պաշտամունքին և դեւերու սեղանին կը մասնակցի : Թուոց 25. 2 : Ա. Կորնթ. 10. 20, 21 : Դեւերը պիղծ են՝ որով անոնց սեղանին վրայ գտնուած բաներն ալ պիղծ են և անկէ ուտողներ դեւերու պղծութիւններուն կը մասնակցին : Աս պղծութեան մէջ գլխաւոր տարր՝ շնութիւնն է : Ա. Թես. 3. 3-8ին հետ բաղդատէ : Ուստի, եթէ մէկը իր սիրտի ազահութեան մղուելով, Աստուծոյ ժողովուրդը դեւերու պիղծ վարդապետութիւններու սեղանին հրաւիրէ, ան՝ Բաղամի վարդապետութիւնը բռնող մըն է, և այդ սեղանին

կանչուողներ շնութիւն ընելով Աստուծոյ անէժքին կենթարկուին :

7. Բաղամի վարդապետութիւնը Քրիստոնէութեան մէջ ինչպէս ներուժուեցաւ : — Գործ. 20. 28-30 : Բ. Թես. 2. 3, 7 : Բ. Պետ. 3. 15, 16 : Քրիստոնէութեան մէջ Սատանան այնպիսի ուսուցիչներ մտցուց որ՝ անոնք կուպաշտական խորհուրդներուն պիղծ սկզբունքները սորվեցնելով, հետզհետէ բոլոր զանգուածը խմորեցին : Պերգամոնի ժամանակամիջոցին Բաղամի վարդապետութիւնը բռնողներ՝ Կոստանդիանոսի շողքորդութիւն (տալգաւլուգլրգ) ընող Եպիսկոպոսներն էին : Յիսուսի Պերգամոն եկեղեցին տուած վկայութիւնը կը ցուցնէ թէ աս շրջանին, բուն Աստուծոյ ճշմարիտ ժողովուրդին առաջնորդներուն մէջ ոմանք Բաղամի վարդապետութիւնէն խմորուած էին :

8. Պերգամոն եկեղեցին մէջ տակա-

ւին որո՞նք կային : — Յայտ. 2. 15 :

9. Յիսուս եկեղեցին ապաշխարութեան ինչպէս կը հրաւիրէ : — Հմբ. 16 :

Ծանօթ. — Յայտ. 19. 15, 16ին մէջ կը տեսնենք թէ Յիսուսի բերանէն ելած սուրին պաշտօնը ազգերը զարնել է : Աստուծոյ եկեղեցին մէջ Բաղամի վարդապետութիւնը բռնողներ հիմա գիտնալու են թէ վերջապէս Յիսուս իրենցմէ վրէժ պիտի առնէ : Աս վախճանը գիտնալ՝ զանոնք զղջումի կ'առաջնորդէ :

10. Յիսուս յաղթողին ինչ կը խոստանայ : — Յայտ. 2. 17 :

Ծանօթ. — Հիմա դեւերու սեղանէն խոյս տուողները Աստուծոյ թագաւորութեան սեղանին մասնակցելով պահուած մասնայէն պիտի ուտեն : Անոնք աս կեանքիս պատերազմին մէջ, փորձառութիւնով տէր եղած վիճակուն համեմատ՝ պիտի արժանանան նոր անունի մը զոր միայն իրենք պիտի գիտնան :

6. Դաս — Այտ. 2. 18-29 :

Թ Ի Խ Ս Ի Ի Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ի և Վ Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի և

« 18 — Եւ թիւատիրի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ Աստուծոյ Որդին, որ կրակի բոցի պէս աչքեր ունի, ու իր ոտքերը ոսկեպղինձի նման են. 19 — Գիտեմ քու գործերդ և սէրդ ու ծառայութիւնդ, և քու հաւատքդ ու համբերութիւնդ, և թէ քու վերջին գործերդ առաջիններէն շատ են : 20 — Բայց քեզի դէմ բան մը ունիմ, որ թող կուտաս Յեզաբէլ կինը, որ ինքզինք մարգարէութիւն կ'անուանէ, ու իմ ծառաներս մոլորեցնելով՝ կը սորվեցնէ պոռնկութիւն ընել և կուռքերու զոհուածներ ուտել : 21 — Եւ ես անոր ժամանակ տուի իր պոռնկութեանը վրայ ապաշխարելու, ու չապաշխարեց : 22 — Ահա ես զանիկա անկողին պիտի ձգեմ, ու անոր հետ շնութիւն ընողները՝ մեծ նեղութեան մէջ, եթէ իրենց գործերուն վրայ չապաշխարեն : 23 — Եւ անոր զաւակները մահով պիտի ձգեմ, ու բոլոր եկեղեցիները պիտի գիտնան թէ ես ան եմ՝ որ երկամուռները ու սիրտերը կը քննեմ. և ամեն մէկուդ ձեր գործերուն համեմատ պիտի հատուցանեմ : 24 — Բայց ձեզի կ'ըսեմ միւսներուդ որ թիւատիրի մէջ էք, ու այս վարդապետութիւնը չունիք, որ չճանչցաք Սատանայի խորունկ բաները, (ինչպէս կ'ըսեն,) Ձեր վրայ ուրիշ ծանրութիւն չեմ ձգեր. 25 — Հապա գայն որ ունիք՝ պահեցէք մինչև ես գամ : 26 — Եւ ան որ կը յաղթէ ու իմ գործերս մինչև վերջը կը պահէ, անոր իշխանութիւն պիտի տամ ազգերուն վրայ, 27 — (Եւ պիտի հովուէ զանոնք երկաթէ գաւազանով. անոնք բրոնտի ամաններուն պէս պիտի փշրուին.) 28 — Ինչպէս ես ալ իմ Հօրմէս առի. ու անոր պիտի տամ առաւօտեան աստղը : 29 — Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն : »

1. Շարքին մէջ չորրորդ եկեղեցին
օրն է:—Յայտ. 2.18ին առաջին մասը:

2. Աս եկեղեցին Յիսուս ինքզինք
ինչ ածականով կը յայտնէ:— Հմր. 18:
«Աստուծոյ Որդին» ածականով: Ոտքե-
րուն ոսկեպղինձի նմանիլը՝ իբրև Աս-
տուծոյ Որդի կատարեալ կենալու հա-
մար նեղութեան հնոցէն անցնիլը ցոյց
կուտայ: Եբր. 5.8,9: Աչքերուն կրակի
բոցի պէս ըլլալը՝ սիրտերը և երկա-
մունքները քննելու իր կարողութիւնը
ցոյց կուտայ: Յայտ. 2.23:

3. Եկեղեցին գովեստի արժանի վի-
ճակը ինչպէս կը յայտնէ:— Յայտ. 2.19:

4. Անոր դէմ ինչ ունի խօսելիք:—
Հմր. 20:

5. Յեզաբէլ օվ էր:— Գ. Թագ. 16.
29-31: Յեզաբէլ Սիդոնացոց Եթբաալ
Թագաւորին աղջիկն էր: Եթբաալ Բա-
հադի հետ ըսել է: Աս մարդը Բահադի
և Աստարովթի քահանայ եղած ատեն
Սիդոնի Թագաւորը սպաննեց ու ինք 52
տարի իշխանութիւն ըրաւ: Տիւրոս ալ
անոր իշխանութեան տակ բահաղապաշ-
տութեան կեդրոն էր: Կ'երեւի թէ սոյն
երկու քաղաքներուն ամբարշտութիւնը՝
Եթբաալի հետ իր տունին մէջ, և Եթ-
բաալի և իր տունին ամբարշտութիւնը
եւս Յեզաբէլի մէջ մարմնացած էր:

6. Աքաաբ Յեզաբէլի հետ ամուսնա-
նալով Իսրայէլին մէջ ինչ մտցուց:—
Գ. Թագ. 16.31-33:

Ծանօթ.— Բահադ և Աստարովթ Փիւ-
նիկեցիներուն արու և էգ գլխաւոր աստ-
ուածներն էին: Բահադ՝ արեւը և Աս-
տարովթ լուսինը կը ներկայացնէր: Յե-
զաբէլին դրդումովը Աքաաբ՝ Բահադին
տաճար մը շինեց և մէջը արեւի հսկայ
պատկեր մը դրաւ: Անոր սեղաններուն
450 քահանաներ կը ծառայէին, և տա-
ճարին շրջանակին մէջ սոսկալի ցան-
կութիւններ՝ շնութիւն ու պոռնկութիւն
կը կատարուէին: Աքաաբ Յեզաբէլի մէջ
եւս Աստարովթ մը այսինքն ծառայեալ
մը անկեց: Աստարովթը սովորաբար ծա-

ռաստան տեղ մը կը անկուէր, որպէսզի
կատարուելիք պղծութիւններուն գաղա-
նի տեղ մը ըլլայ: Յեզաբէլ ինքզինք
Աստարովթի պաշտամունքին նուիրած
էր, անոր 400 մարգարէները իր սեղանէն
կուտէին (Գ. Թագ. 18.19), և ինք ա-
նոնց պետը՝ գլխաւոր մարգարէուհին էր:
Ուրիշ խօսքերով, Յեզաբէլ՝ արեւապաշ-
տութեան և ամբողջ պղծութիւններու
ու անմաքրութիւններու մայրն էր: Գ.
Թագ. 9.22: Բ. Մնաց. 21.13:

7. Արեւապաշտութեան մէջ շնութիւնը
ինչո՞ւ գլխաւոր տարրը եղած էր:

Պատ. — Արեւապաշտութիւնը՝ բնու-
թեան մէջ եղած սերնդագործութեան
սկզբունքին պաշտումն է: Արեւապաշտ-
ներուն պնդումը աս էր թէ բոլոր բեր-
քեր՝ արեւին երկրիս հետ միանալէն ա-
ռաջ կուգայ: Անոնք աս սերնդագոր-
ծութեան սկզբունքը աստուածացնելով
անոր իբրև պաշտամունքի ձև՝ արունե-
րուն էգերուն հետ զուգաւորիլը որոշեցին:

8. Յեզաբէլ Իսրայէլի մէջ արեւապաշ-
տութիւնը հաստատելու համար ինչ ը-
րած էր:— Գ. Թագ. 18.13: Ենովային
պաշտամունքը բռնի գործութիւնով վեր-
ցուցած և Տէրոջը մարգարէները սպան-
նած էր: Եւ ասոր մէջ այն աստիճան յա-
ջողած էր որ՝ բոլոր Իսրայէլի մէջ Տէ-
րոջը հաւատարիմ միայն 7,000 հոգի մը-
նացած էր, և ասոնք ալ՝ այնչափ ան-
ծանօթ տեղեր քաջուած ու իրարմէ այն-
չափ անտեղեակ էին որ՝ Եզիա մարգա-
րէ միայն ինքզինք մնացած կը կարծէր:
Գ. Թագ. 19.14,18:

9. Յեզաբէլին ընթացքը Քրիստոնէ-
ութեան մէջ ինչպէս կրկնուեցաւ:— Բ.
Թես. 2.3-8: Յայտ. 17.1-6: Հռովմէ-
ական եկեղեցին՝ Հռովմէական կառա-
վարութիւնը ձեռք ձգելով իբրև պա-
պական իշխանութիւն կազմակերպուե-
լուն մէջ կրկնուեցաւ: Հռովմէական եր-
կիրին մէջ գլխաւոր պաշտամունք Արե-
ւապաշտութիւնն էր: Երբ աս կրօնքէն
շատեր Քրիստոնէութեան դարձան, արե-

ւապաշտական փիլիսոփայութիւնէն շատ
մը գաղափարներ իրենց հետ բերելով
անոնցմով Քրիստոնէական աշխարհը ա-
նանկ մը խմորեցին որ՝ ժամանակի անց-
քին մէջ Քրիստոնէութիւնը արեւապաշ-
տութեան փոխուեցաւ: Ասոր կեդրոնը
Հռովմէական եկեղեցին էր որ Մարգարէ-
ուհի եմ՝ ըսող կնոջ Յեզաբէլի կը նման-
ցուի: Աս կինը Հռովմէական կառավա-
րութեան հետ ամուսնացաւ, ան ալ,
Աքաաբի պէս ինքզինք անոր կամքին
յանձնեց: Աս Յեզաբէլն ալ իր կրօնքը
հաստատելու համար՝ Ենովային պաշտա-
մունքները ջնջելով Անոր սուրբերը հա-
լածեց: Եւ աս վերջինները ցիրուցան մէկ
վիճակի մէջ՝ երկիրին ծածուկ վայրերը
քաշուեցան ու հոն Աստուծոյ խօսքովը
կերակրուեցան: Յայտ. 12. 6, 14: Աս
համարներուն մէջ յիշուած շրջանը Յ.
Տ. 538էն մինչև 1798 տեւող 1260 տար-
ուան պապական կառավարութեան շր-
ջանն է: Ուրեմն, Թիւատիրի եկեղեցին՝
յիշեալ շրջանին մէջ այսինքն Յեզաբէլ
կնոջ ուժգնորէն գործելով յաջող եղած
ատեն՝ աշխատութիւն ու նեղութիւն
կրող սուրբերուն խումբը կը նշանակէ:
Յեզաբէլ կինը երբ իր պոռնկութիւննե-
րը եւս անոնց մէջ մտցնելու համար քա-
րողիչներ զրկեց՝ Թոյլտուութիւն ըրին:
Աստուած երբ կը գովէ անոնց սէրը, աշ-
խատութիւնը և համբերութիւնը՝ աս մեզ
քը կը յանդիմանէ: Եկեղեցին այնքան
զգաստ և արթուն ըլլալու է որ Յեզա-
բէլին պոռնկութեան վարդապետութիւն-
ներէն և ոչ մէկը չի կրնայ հոն մտնել:
10. Աստուած, աս կնոջ, ապաշխա-
րութեան համար ժամանակ տուա՞ւ:—
Յայտ. 2. 21:

11. Յիսուս աս կնոջ և անոր հետը
պոռնկութիւն ընողներուն վրայ ինչ դա-
տաստաններ ընելը կը խօսի:— Հմր.
22, 23:

12. Յիսուս ասիկա երբ պիտի կա-
տարէ: Յայտ. 19. 19-21: Իր երկրորդ
գալուստին:

13. Երբ աս ըլլայ բոլոր եկեղեցի-
ներ ինչ պիտի գիտնան:— Յայտ. 2.23:

14. Թիւատիր եկեղեցիին մէջ հաւա-
տարիմ մնացողները՝ Յիսուս օր կէտին
մէջ կը վստահեցնէ: Հմր. 24:

Ծանօթ. «Աստանայի խորունկ բա-
ները» ամբարշտութեան խորհուրդը՝ այ-
սինքն Յեզաբէլ կնոջ պոռնկութիւն ու
պղծութիւնները ըլլալուն՝ հաւատացեալ-
ները աս խորհուրդը բնաւ գիտնալու
չեն: Յիսուս ալ անոնց վրայ ուրիշ ծան-
րութիւն պիտի չդնէ: Քաջած նեղու-
թիւննին բաղձացուած արդիւնքը առաջ
բերելու բաւական էր:

15. Ո՞ր պայմանով:— Հմր. 25: Եթէ
իրենց բռնած բանը հաստատ չի պահէին:
Աստուած զանոնք մաքրելու համար ա-
ւելի ծանրութիւններ դնելու պիտի ըս-
տիպուէր:

16. Յաղթողին Յիսուս ինչ կը խոս-
տանայ:— Հմր. 26:

17. Աս իշխանութիւնով ան անձը
ինչ պիտի ընէ: Հմր. 27:

18. Յաղթողին Յիսուս ուրիշ ինչ կը
խոստանայ:— Հմր. 28: Քրիստոս իր ու-
նեցած փառքը անոր պիտի տայ: Յովհ.
17.22ին հետ բաղձատէ:

19. Աս վկայութիւնը օր աստիճա-
նի ուշադրութեան արժանի է:— Յայտ.
2. 29:

1131-84

7. Դաս — Յայտ. 3. 1-6

ՍԱՐԳԻԿԵԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

«Եւ Սարգիկէի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ անիկա որ ունի Աստուծոյ եօթը հոգիները ու եօթը աստղերը. գիտեմ քու գործերդ՝ որ դուն անուն ունիս թէ կենդանի ես, ու մեռած ես: 2 — Արթուն կեցիր և հաստատէ մնացած բաները որոնք մեռնելու վրայ են, վասնզի քու գործերդ Աստուծոյ առջև կատարեալ չգտայ: 3 — Հիմա միտքդ բեր թէ ի՞նչպէս ընդունեցիր ու լսեցիր, ու պահէ և ապաշխարէ. բայց եթէ արթննալու չըլլաս, գողի պէս քու վրադ պիտի գամ, ու քնաւ պիտի չգիտնաս թէ ո՞ր ժամուն քու վրադ պիտի գամ: 4 — Սակայն քանի մը անձեր ունիս Սարգիկէի մէջ, որոնք իրենց հանդերձները չաղտոտեցին, և ձերմակներով պիտի պտտին ինծի հետ, քանզի արժանի են: 5 — Ան որ կը յաղթէ՝ ձերմակներ պիտի հագնի, ու ես անոր անունը կենաց գիրքէն պիտի չաւրեմ, ու անոր անունը պիտի դաւանիմ իմ Հօրս առջև ու անոր հրեշտակներուն առջև: 6 — Ան որ ականջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՞նչ կ'ըսէ եկեղեցիներուն:»

1. Տէր Յիսուս հինգերորդ վկայութիւնը որո՞ւ կ'ողզէ: — Յայտ. 3. 1ին առաջին մասը:

2. Ինքզինք եկեղեցիին ի՞նչ անականով կը ներկայացնէ: Հմր. 1ին միջին մասը: «Անիկա որ ունի Աստուծոյ եօթը հոգիները ու եօթը աստղերը:»

Ծանօթ. — Աստուծոյ եօթը հոգին՝ Աստուծոյ հոգիին լիութիւնը, և եօթը աստղ՝ բոլոր եկեղեցիներուն ամբողջ պաշտօնեաները կ'իմացնէ: Քրիստոս ասոնց տէրն է: Աստուծոյ հոգին ո՞րու որ զրկուի՝ Անկէ և Անոր միջոցով կը զըրկուի, ու անոր իշխանութեան ներքև չի գտնուած աստղ մը չիկայ: Ուստի, Յիսուս գրտէ թէ որու քով կեանք կայ և կամ չիկայ:

3. Սարգիկէ եկեղեցիին բուն վիճակը Յիսուս ի՞նչպէս կը յայտնէ: Յայտ. 3. 1ին վերջին մասը:

Ծանօթ. — Աս եկեղեցին նախապէս Յիսուսէն՝ Աստուծոյ հոգին առած, և Աստուծոյ կեանքը աշխարհին տուող միջոց մը եղած էր: Բայց վերջերը Յիսուս անկէ Աստուծոյ հոգին քաշելով թէ և նախապէս տիրացած կենդանի անունը իր վրայ կը մնար, բայց իրապէս մեռած վիճակի մը մէջ էր: Եկեղեցի մը որ ներկայիս մէջ Յիսուսի հոգին ստացած չէ, անցեալին

մէջ իր ստացած ըլլալը զինք հիմա չի կենդանացներ:

4. Յիսուս Սարգիկէի եկեղեցիին վերականգնումին համար ի՞նչպիսի յոյս մը կը տածէ: — Յայտ. 3. 2ին առաջին մասը: Որքան որ եկեղեցիին մէջ մահուան ոյժը կը գործէ, սակայն, Աստուծոյ հոգին տակաւին չէ քաշուած բոլորովին: Իսկ եթէ այսպէս շարունակէ վիճակը՝ Աստուծոյ հոգին ամբողջովին պիտի քաշուի և եկեղեցիին մէջ կենդանի բան մը պիտի չի մնայ: Ուստի, Յիսուս եկեղեցին կը հրահանգէ որ հաստատէ մնացած բաները որ մեռնելու վրայ են: Եկեղեցին աս միջոցով Աստուծոյ հոգիին հոսանքը աւելցնելով նորէն կենդանի վիճակի մը կրնայ հասնիլ:

5. Եկեղեցիին մեռնելու վրայ ըլլալուն Յիսուս ի՞նչ ապացոյց կը ցուցնէ: — Հմր. 2ին վերջին մասը: Աստուծոյ հոգին եկեղեցիէն որչափ պակսի, նոյն չափով ալ գործերուն մէջ թերութիւն առաջ կուգայ:

6. Քրիստոս ո՞ր խօսքերով եկեղեցիին ապաշխարութեան կը հրաւիրէ: — Հմր. 3ին առաջին մասը: «Հիմա միտքդ բեր թէ ի՞նչպէս ընդունեցիր ու լսեցիր:» Աս խօսքերը ցոյց կուտան թէ եկեղեցին՝ նախապէս իր ընդունած ու լսած բաները

թողուցած ըլլալով, անոնցմէ փոքրիկ բան մը մնացած է իրեն:

7. Եկեղեցիին ընդունած ու լսած բաները հիմնապէս ի՞նչ բաներ էին: — Ա. Կորնթ. 15. 1-4: Գործ. 10. 31-43: 2. 32-36: 3. 13-21: Եբր. 9. 28:

Ծանօթ. — Մեր մեղքերուն համար Յիսուսի մեռնիլը, մեզ արդարացնելու համար յարութիւն առնելը, մեզի՝ ապաշխարութիւնը և մեղքերու թողութիւնը տալու համար Աստուծոյ աջ կողմը Տէր և Օծեալ, Իշխան և Փրկիչ ըլլալը, և իրեն սպասողներուն փրկութեան համար երկրորդ անգամ յայտնուիլը՝ Աւետարանին հիմնական սկզբունքները են: Ասոնք լսելով և հաւատարմով ու պահելով Աստուծոյ առջև կ'արդարանանք, Աստուծոյ կնիքով կը կնքուինք և Յիսուսի յայտնուելուն պատրաստ կ'ըլլանք: Կարճ խօսքով, Պօղոս առաքեալին ըսածին համեմատ՝ աս բաները հաստատ բռնելով կը փրկուինք: Սարգիկէի եկեղեցին աս բաները ընդունած բայց ժամանակին անցնելովը զանոնք հաստատ բռնելուն մէջ տկարութիւն ցուցուցած և հետզհետէ կորսնցուցած էր: Եւ քանի որ Յիսուսին ունեցած Ս. Հոգին՝ Աւետարանին աս հիմնական սկզբունքներուն հաւատարմուն վրայ է որ կը զրկուի (Եփես. 1. 13), զանոնք թողելուն մէջ եկեղեցիէն նոյն հոգին քաշուելով մահ տեղի ունեցած էր: Կրկին վերականգնուելուն միակ ճամբան՝ ան առաջուան փորձառական կրօնքին տիրանալն է:

8. Չապաշխարելուն ամենասոսկալի վտանգը ի՞նչ է: — Յայտ. 3. 3ին վերջին մասը:

9. Քրիստոսի գողի պէս գալուն մէջ ի՞նչ վտանգ կայ: — Ա. Թես. 5. 1-3: Մատթ. 24. 42-51: Քրիստոսի գողի պէս գալուն մէջ միայն կործանում և փճացում կան:

10. Եկեղեցին երբ զգաստ ու արթուն և պատրաստ ըլլայ, Քրիստոսի գալուստը ինչո՞ւ յանկարծ չի պատահիր: — Ա. Թես. 5. 4-8:

11. Ի՞նչ է այն լուսատու ճրագը որ եկեղեցիին ունի: — Բ. Պետ. 1. 19: «Մարգարէական խօսքը:»

Ծանօթ. — Յիսուսի հաւատքին ըսկզբունքները բռնողներ Յիսուսի գալուն պատրաստ կ'ըլլան, և մարգարէութեան խօսքին մէջ անոր նշանները գտնելով անոնց ուշադրութիւն կուտան, ատեններն ու ժամանակները կը հասկնան. այնպէս որ այն օրը անոնց վրայ գողի պէս, կամ Յիսուսի գալուստը՝ անոնց չի սպասած օրը և կամ ժամը եկած չըլլար:

12. Արթուն եղողներ Յիսուսի գալուն մօտաւորութեանը ո՞ր աստիճան հմուտ կրնան ըլլալ: — Մատթ. 24. 32-35:

Ծանօթ. — Երբ եկեղեցին արթուն չըլլայ, թէ և նշանները տեղի կ'ունենան բայց զանոնք չեն կրնար ճանչնալ, այսինքն, տեղի ունեցած բաներուն Յիսուսի գալուստին հետ ունեցած յարաբերութիւնը չեն հասկնար և ժամանակները չի գիտնալով խաւար վիճակի մէջ կը մնան: Բայց արթուն կեցողներ նշանները կը ճանչնան և կը հասկնան թէ Անոր գալը մօտ է, դուռներուն քով:

13. Աստուծոյ խօսքին մէջ, եկեղեցիին համար իբրև ամենավտանգաւոր օրեր որոնք են: — Մատթ. 24. 37-39:

Ծանօթ. — Եկեղեցիին համար ամենաւտանգաւոր օրեր՝ Յիսուսի գալուն մօտաւորութեան ատենն է: Սատանային ամենամեծ ջանքը աս է որ եկեղեցին ասիկայ չի գիտնայ: Ասոր համար եկեղեցին քնացնելու ջանք կ'ընէ՝ նշանները կատարուած պարագաներուն: Քրիստոս ալ՝ եկեղեցիին ճիշդ աս միջոցներուն արթնցնելու կը ջանայ:

14. Յիսուս մասնաւորապէս ո՞ր նշաններուն կը հրաւիրէ մեր ուշադրութիւնը: Մատթ. 24. 29:

Ծանօթ. — Ա. Համարին մէջ «այն նեղութեան օրեր» ո՞ճը՝ եկեղեցիին Պապական իշխանութեան երեսէն քաշած նեղութիւնը կը նշանակէ, որ Թ. Տ.

1750ի ատենները վերջացաւ : Անկէ վերջ յիշեալ նշանները կատարուել սկսան : Յ. Տ. 1780, Մայիս 19ին արեւուն և լուսնին խաւարումները, Յ. Տ. 1833, Նոյ. 13ին երկինքի աստղերուն թափելը տեղի ունեցան : Երկինքի զօրութիւններուն շարժիլը մնացած է : Աս նշաններուն կատարուած ժամանակը արթուն մնալը եկեղեցին վտանգէն ապահով կը պահէ :

Յ. Գաս — Յայտ. 3. 3—6:

ՍԱՐԴԻԿԷԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ
(Շարունակութիւն)

1. Նախորդ դասով մեր ուսումնասիրած նշաններուն նայելով Սարդիկէ եկեղեցիին ցոյց տուած ժամանակը ինչպէս կրնանք որոշել :

Պատ. — Թիւատիրի եկեղեցին քանի որ պապական իշխանութեան հալածանքին մէջ ապրող եկեղեցին կը ցուցնէ, Սարդիկէ եկեղեցին՝ 15րդ դարուն մէջ տեղերը ծագող Բողոքական մեծ բարեկարգութեան առաջ բերած եկեղեցիները կը նշանակէ : Աս եկեղեցիները աւետարանի քարոզութեան սկիզբները եղածին պէս ուղիղ ու առողջ սկզբունքներով կազմուեցան : Նախ ամենահաստատ հիմ Աստուծոյ խօսքը և միայն Աստուծոյ խօսքն էր : Աս սկզբունքը՝ Հռովմէական եկեղեցիին բոլոր աւանդութիւնները մէկդի ըրաւ : Երկրորդ, Աստուծոյ խօսքէն տեսած ամենատրոշ մէկ վարդապետութիւննին՝ հաւատքով արդարանայն էր : Աս վարդապետութիւնը, Հռովմի գործերով արդարանալու վարդապետութիւնը փճացուց : Աս սկզբունքներուն վրայ կառուցուած եկեղեցիներուն մէջ Աստուծոյ Հոգիին զօրութիւնը յայտնուելովը՝ կենդանի վիճակ մը երեւան գալ սկսաւ : Սակայն քիչ ժամանակ վերջ, Բողոքական եկեղեցիները սոյն սկզբունքները իրագործելուն մէջ տկարութիւն ցուցնելով ինչ ինչ Հռով-

մէական աւանդութիւններ պահելուն մէջ շարունակեցին : Գործերու այս վիճակին Աստուծոյ Հոգին եկեղեցիներէն քաշուելու և նախապէս երեւան ելած այն կենդանի վիճակը մարիլ սկսաւ : Միայն Աստուծոյ խօսքին կը նայինք ըսելով ինքզինքնին Աւետարանական անուանելով հանդերձ, Հռովմէական աւանդութիւնները պահող Բողոքական եկեղեցիներուն վիճակը Սարդիկէ եկեղեցիով խիստ գեղեցիկ պատկերացուած է ու «Անուն ունիս թէ կենդանի ես, ու մեռած ես»)

2. Բողոքական եկեղեցիներ երբ Հռովմի սկզբունքներէն չի մաքրուեցան ո՞ր վտանգին ենթարկուեցան :

Պատ. — Յիսուսի երկրորդ գալուստին չի սպասելու վտանգին մէջ ինկան : Նախորդ դասին մէջ տեսանք թէ երբ եկեղեցին աւետարանին սկզբունքները հաստատ կը բռնէ՝ փրկութեան համար Քրիստոսի յայտնուելուն կը սպասէ : Սկզբունքներ երբ գործնականապէս մէկդի թողուին, Յիսուսի գալուն սպասելն ալ մէկդի կը թողուի : Մինչդեռ Բողոքական բարեկարգութիւնը հանելուն մէջ Աստուծոյ նպատակը՝ եկեղեցին Քրիստոսի գալուստին պատրաստել էր : Ժամանակը եկած էր որ Քրիստոսի գալուստին նշանները երեւիլ սկսին, և եկեղեցին զանոնք ճանչնալով այդ փառաւոր վախճանին պատրաստ ըլլայ : Եկեղեցիին մեռնելու վրայ եղող վիճակը Յիսուս առաջուց նախատեսելով, կարեկցօրէն Սարդիկէ եկեղեցիին վկայութիւնը գրել տուաւ, որպէս զի արթուն մնալով կատարուելու վրայ եղող նշաններուն ու շարունակութիւն ընէ, և Յիսուսի գալուստէն՝ յաւիտենական կորուստի վճռին չենթարկուի :

3. Սարդիկէի մէջ Յիսուսի գոված քանի մը անձերուն դասուելը ինչպէս կը յայտնուի : Յայտ. 3. 4 : Բարեկարգութեան առաջ բերած եկեղեցիները՝ ընդհանրապէս մեռած վիճակի մը են՝ թարկուեցան թէև, անոնց մէջ աւետար-

րանին սկզբունքները հաստատ բռնող և հանդերձին չաղտոտող անձեր եւս կը գտնուէին : Երբ նշանները կատարուել սկսան, անոնք ճանչնալով ասիկա՝ Քրիստոսի երկրորդ գալուստին պատրաստուեցան : Երբ Քրիստոս գայ, ասոնք գերեզմաններէն յարութիւն առնելով, Անոր հետ ձերմակ հանդերձներով պիտի պտտին :

4. Յաղթողը ի՞նչ տեսակ հանդերձներ պիտի հագնի : — Հմր. 5ին առաջին մասը :

Ծանօթ. — Յաղթողը ան էր որ Յիսուսի վկայութիւնը ընդունելով Հռովմի վարդապետութիւնները կը թողու և Աւետարանին սկզբունքները հաստատ կը բռնէ : Ասանկ ընողներ՝ հաւատքով կ'արդարանան և Ս. Հոգիով կը սրբուին, մաքուր ու անբիծ նկարագիր մը կը կազմեն և Յիսուսի գալուստեանը այդ նկարագիրին համաձայն ձերմակ հանդերձներ կը հագնին :

5. Հիմա, իրենց հանդերձները չաղտոտողներուն Յիսուս ի՞նչ կը խոստանայ : — Հմր. 5ին միջին մասը :

Ծանօթ. — Աւետարանին ներկայացուցած մաքուր սկզբունքները հաստատ չի բռնող ու է անհատ՝ հիմա Յիսուսէն կենդանութեան հոգի չի կրնար առնել, և քննութեան ժամանակ անունն ալ կենաց գիրքէն կը ջնջուի : Կենաց գիրքին մէջ միայն անոնց անունները պիտի մընան, որոնք, հիմա Քրիստոսի հոգիին տէր են :

6. Յաղթողին Յիսուս տակաւին ի՞նչ կը խոստանայ : — Հմր. 5ին վերջին մասը :

Ծանօթ. — Գնութեան ժամանակ, ա-

մեն մարդ Յիսուսի վկայութեան համեմատ պիտի դատուի : Քանի որ Աստուծոյ եօթը հոգին և եօթը աստղերը միայն Յիսուսի քով կը գտնուին՝ միայն Անոր վկայութիւնը վերջնական և ընդունելի կը նկատուի : Յիսուս ըսաւ «Հայրը մէկը չի դատեր, հապա ամեն դատաստանը որդւոյն տուաւ :» Յովհ. 5. 22 : Պետոս առաքեալ անոր նկատմամբ կըսէ թէ «Անկա է Աստուծմէ սահմանուած՝ կենդանիներուն ու մեռելներուն դատաւորը Գոր. 10. 42 : Պօղոս առաքեալ եւս «Քրիստոս ալ անոր համար մեռաւ ու ապրեցաւ որ առ հասարակ մեռելներուն ու կենդանիներուն իշխէ» կ'ըսէ Հռովմ. 14. 9 : Քննութեան ժամանակ Հօրը ու բոլոր հրեշտակներուն ներկայութեանը՝ Քրիստոս անհատ անհատ ամեն անձին յաւիտենական բաժինը պիտի յայտնէ, և Անոր արձական վճիռը վերջնական պիտի նկատուի :

7. Աս քննութեան տեսարանը ո՞ր նկարագրուած է : — Դան. 7. 9, 10, 13 :

8. Ասոր ատենին նկատմամբ Աստուծոյ խօսելը ի՞նչ կը յայտնէ : — Դան. 8. 14 :

Ծանօթ. — 2300 օրը՝ Դան. 9. 25—27ի մէջ տրուած մեկնութեան համեմատ՝ Ն. Ք. զՔր. 457ին սկսելով Յ. Տ. 1844ին կը հասնի : Սոյն թուականին երկինքի մէջ քննական դատաստանին սկսուեցաւ : Սարդիկէի եկեղեցին ուշագրաւ իրողութեան եղբին մօտեցած ըլլալով Յիսուսի վկայութեան կարեւորութիւնը ակնբերէ է :

9. Եկեղեցիներ Յիսուսի վկայութեան ո՞ր աստիճան կարեւորութիւն տալու են : — Յայտ. 3. 6 :

9. Դաս — Յայտ. 3. 7-13:

ՓԻՂԱԴԵՂՓԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՆ

«7 — Եւ Փիղաղեղփիայի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ այն Սուրբը, այն ճշմարիտը որ Դաւիթի բանալին ունի. կը բանայ ու մէկը չկայ որ գոցէ, և կը գոցէ ու մէկը չկայ որ բանայ: 8 — Գիտեմ քու գործերդ. ահա քու առջեւը բացուած դուռ մը դրի, զոր մէկը չկրնար գոցել. վասնզի դուն քիչ մը կարողութիւն ունիս, և իմ խօսքս պահեցիր ու իմ անունն չուրացար: 9 — Ահա ես քեզի կուտամ Սատանայի ժողովքէն եղողները, որոնք կ'ըսեն թէ իրենք Հրեայ են ու չեն, հապա սուտ կ'ըսեն. ահա պիտի ստիպեմ զանոնք որ գան ու երկրպագութիւն ընեն քու ոտքերուդ առջև, և ճանչնան թէ ես քեզ սիրեցի: 10 — Որովհետեւ իմ համբերութեանս խօսքը պահեցիր. ես ալ քեզ պիտի պահեմ փորձութեան ժամանակ, որ պատրաստ է գալու բոլոր աշխարհի վրայ՝ երկրի երեսը բնակողները փորձելու համար: 11 — Ահա ես շուտով կուգամ. ունեցածդ ամուր բռնէ, որպէսզի մէկը չառնէ քու պահիդ: 12 — Ան որ կը յաղթէ, անիկա իմ Աստուծոյ տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ, ու ալ դուրս պիտի չելլէ. և անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ, ու իմ Աստուծոյ քաղաքին անունը, այսինքն նոր Երուսաղէմի, որ երկինքէն իմ Աստուծմէս կ'իջնէ, և իմ նոր անունս. 13 — Ան որ ականջ ունի, թող լսէ թէ հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն»

1. Շարքին մէջ վեցերորդ եկեղեցին ո՞րն է: — Յայտ. 3. 7ին առաջին մասը:
2. Աս եկեղեցիին Յիսուս ինքզինք ինչ հանգամանքով կը ներկայացնէ: — Հմբ. 7: Աս որակումները եկեղեցիին վիճակին սերտ յարաբերութիւն ունին:
3. Դաւիթի բանալիին տէր ըլլալը՝ մեզի ինչ բանը կը յիշեցնէ: — Բ. Թագ. 7. 12-16: Ղուկ. 1. 31-33: Դաւիթի եղած խոստումները կը յիշեցնէ:
- Ծանօթ. — Աստուած Դաւիթի խոստացաւ որ թագաւորութիւնը իր սերունդին ձեռքը յաւիտեան պիտի հաստատուի: Գրիստոս այս խոստումին համեմատ ծնաւ, և այս խոստումին համեմատ երկինքի մէջ Աստուծոյ աջ կողմը կը նստի: Քանի որ Դաւիթի բանալին, այսինքն իշխանութիւնը իր քով կը գտնուի՝ կը բանայ ու բացածը մէկը չի կրնար գոցել, և կը գոցէ ու մէկը չի կրնար բանալ:
4. Դաւիթի շնորհուած հաստատ ու հաւատարիմ խոստումներուն համեմատ՝ Յիսուս Փիղաղեղփիայ եկեղեցիին առջև ինչ դրած ըլլալը կը խօսի: — Յայտ. 3. 8ին առաջին մասը:
- Ծանօթ. — «Ահա քու առջեւը բաց-

- ուած դուռ մը դրի, զոր մէկը չկրնար գոցել» Փիղաղեղփիայ եկեղեցիին առջև դրուած աս բաց դուռը՝ Յիսուս Դաւիթին բանալիովը բացած է: Ուրեմն անոր բացուելը՝ Դաւիթի եղած խոստումներուն կը վերաբերի: Եւ թէ Հմբ. 7ին մէջ, բանալը՝ գոցելուն հետ մէկ սերտ յարաբերութեան մէջ ըլլալուն, կ'եզրակացնենք թէ մինչ աս դուռը բացուեցաւ, ուրիշ դուռ մըն ալ գոցուեցաւ: Եկեղեցիին առջև դուռի մը բացուելը և ուրիշ դուռի մը եւս գոցուելը խորհրդածութեան կարեւոր նիւթն է:
5. Դաւիթի եղած խոստումին համաձայն, երբ Աստուած Յիսուսը Իսրայէլի Փրկիչը ըլլալու համար զրկեց՝ փրկագործութիւնը կատարելու համար զանիկա ո՞ւր առաւ: Գոր. 13. 23: 2. 34-36:
6. Յիսուս երկինքի մէջ, Աստուծոյ աջ կողմը ինչ բանին պաշտօնեան է: — Եբբ. 8. 1, 2:
7. Յիսուս յիշեալ սրբարանը ինչո՞ւ մտաւ: — Եբբ. 6. 19, 20: «Իբրև առաջնորդ մտաւ՝ մեզի համար»
- Ծանօթ. — Խաչին վրայ երբ Յիսուս հոգին աւանդեց, երկրաւոր տաճարին

վարագոյրը երկուքի ձեղքուեցաւ և հոն կատարուելու վրայ ելող պաշտօնները վերջացան: Եւ Յիսուս երբ երկնային սրբարանը մտաւ, ան ատեն այն տեղի պաշտամունքները սկսան: Ուրիշ խօսքերով, երկրային սրբարանին դուռը գոցուելով, Աստուծոյ ժողովուրդին առջև երկնային սրբարանին դուռը բացուեցաւ: «Հոգին Սուրբ զայս ցուցնելով՝ թէ սրբարանին (Երկնային սրբարանին) ճանապարհը յայտնի եղած չէր, քանի որ տակաւին առաջին խորանը (աշխարհային սրբարան) կը կենար (այսինքն մինչ անոր արարողութիւնները կը կատարուին ու Աստուծոյ ժողովուրդը անոնց կը նայի):» Եբբ. 9. 8: Բայց երբ Յիսուս իր արիւնով յաւիտեանական զոհ պատրաստելով երկնային սրբարանը մտաւ, օրինակ եւ զող առջի խորանը իր բոլոր արարողութիւններովը գոցեց և Աստուծոյ ժողովուրդին յոյսը՝ երկնային սրբարանին բաց դուռնէն ներս մտցուց:

8. Երկնային սրբարանը քանի՞ խորան ունի: — Յայտ. 4. 1-6: 11. 18, 19: Աս համարներուն մէջ կը տեսնենք թէ Յովհաննէսին երկու խորան յայտնուեցաւ: Նախ սրբարանին առաջին խորանը. Յովհաննէս, Յայտնութեան մէջ, անոր բաց դուռնէն ներս առնուելով Աստուծոյ խորհուրդներուն տեղեակ եղաւ: Յետոյ, եօթներորդ փողին՝ երբ մեռելներուն դասուեցաւ ժառանգելու եկաւ՝ սրբարանին երկրորդ այսինքն ուխտին տապանակին խորանը բացուեցաւ:

Աստուծոյ ծողովուրդին դասուելը ըլլալով, անով երկնային սրբարանին պաշտամունքները կը վերջանան:

10. Աշխարհային սրբարանին մէջ այս վերջին օրուան պաշտամունքով ինչ կ'ըլլար: — Ղեւ. 16. 15-19: Հարկաւ երկնային սրբարանին վերջին պաշտամունքովն ալ երկնային սրբարանը կը մաքրուի:

11. Դանիէլի մարգարէութեան համաձայն երկնային սրբարանին մաքրուելը ո՞ր ատեն պիտի ըլլար: — Դան. 8. 14:

Ծանօթ. — Ինչպէս նախորդ դասին մէջ ըսուեցաւ, 2300 օրը Յ. Տ. 1844ին կը հասնի: Ճիշդ նոյն տարին, եօթներորդ ամիսին տասներորդ օրը, այսինքն Հոկտ. 22ին՝ երկնային սրբարանին մաքրուելու պաշտամունքին սկսուելու համար ուխտին տապանակին խորանը բացուեցաւ: Ասոր բացուելովը առաջին խորանին դուռը գոցուեցաւ: Գոցուած դուռը մէկը չի կրնար բանալ և բացուած դուռը մէկը չի կրնար գոցել: Ահա այս է Փիղաղեղփիայի եկեղեցիին առջև դրուած բաց դուռը, այսինքն երկնային սրբարանին երկրորդ խորանին դուռը: Եկեղեցին, ասկէ վերջ, հաւատքով այդ բաց դուռնէն սրբութիւն սրբոցը պիտի մտնէ: Հոն ատենանը դրուած և գիրքերը բացուած ըլլալով Աստուած դատատանի սկսած է:

10. Դաս — Յայտ. 3. 7-13:

ՓԻՂԱԴԵՂՓԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՆ (Շարունակաւորութեամբ)

1. Փիղաղեղփիայի եկեղեցիին առջև բաց դուռ մը դրուելուն մէջ՝ Յիսուս եկեղեցիին ո՞ր գովելի յատկութիւնը ուշադրութեան առած ըլլալը կ'ըսէ: — Յայտ. 3. 8ին վերջին մասը:
- Ծանօթ. — Աս խօսքերը մասնաւոր կ'ընեն թէ երկնային սրբարանին սրբութեան սրբօրդ դուռը՝ եկեղեցիին առջև

9. Աշխարհային սրբարանին մէջ, ուխտին տապանակին խորանը երբ կը բացուէր: — Ղեւ. 16. 29-34: Երբ Իսրայէլին բոլոր մեղքերուն համար քաւութեան ժամանակը գար: Ասիկա ալ, ամեն տարի եօթներորդ ամիսին տասներորդ օրն էր: Նոյն օրուան պաշտօնովը աշխարհային սրբարանին պաշտամունքներուն տարեկան շրջանը կը լրանար: Աս օրինակին բունը՝ երկնային սրբարանին ամենավերջին պաշտօնը՝ այսինքն

բացուելէն առաջ, եկեղեցիին մեծ փորձութենէ անցած և անոր մէջ Աստուծոյ խօսքը և Յիսուսի անունը հաստատ բռնած է :

2. Փիղաղեղփիայի եկեղեցին ի՞նչ պիտի փորձութենէ մը անցաւ :

Պատ. — Մինչ Սարգիսի եկեղեցիին մեծամասնութիւնը մեռած վիճակի մը մէջ կը քնանար, անոր մէջ Աստուծոյ գոված «Քանի մը անձեր» Ս. Գիրքը մեծ ուշադրութիւնով քննեցին, նշաններուն նայելով Յիսուսին երկրորդ գալուստին մօտ ըլլալը հասկցան, և զօրութիւնով ելան ու սկսան քարոզել աս վարդապետութիւնը : Այս շարժումին մէջ եկեղեցին նոր շրջանի մը ոտնակոխեց, այսինքն Փիղաղեղփիայ, որ եղբայրական սէր ըսել է : Յիսուսի գալուն քարոզութիւնը եկեղեցիներուն մէջ նախապէս զօրաւոր շարժում մը յառաջ բերաւ և շատ մարդիկ թէև արտաքինապէս հաւատացին, բայց որոշուած օրը, այսինքն 1844 Հոկտեմբեր 23ին երբ Յիսուս երկինքէն չի յայտնուեցաւ՝ քանիններ ետ քաշուեցան, և արդէն աս շարժումը ծաղրող աշխարհին հետ միանալով սկսան ծաղրել : Աստուծոյ ճշմարիտ ծառաները խիստ քիչ մնացին : Սակայն ասոնք աս մեծ յուսախարութեան մէջ Տէրը փրկուեցին : Ան ալ մօտենալով աս յուսախարութեան գաղտնիքը անոնց յայտնեց : Անոնք Դան. 8. 14ի սրբարանին մաքրուելը Յիսուսի գալուստին միացնելով, սորվեցուցած էին թէ Յիսուս պիտի գայ և երկիրը կրակով պիտի մաքրէ : Երբ Աստուած երկնային սրբարանին լոյսը տուաւ անոնց, տեսաւ թէ սրբարանը այս երկիրը չէ և սրբարանին մաքրուելն ալ երկրիս կրակով մաքրուելը չէ : Եւ քաջալերուելով երկնային սրբարանին մաքրուելուն այսինքն Յիսուսի վերջին քառութեան պաշտօնին նայիլ սկսան : Գալով Աստուծոյ խօսքը հաստատչի բռնողներուն, անոնք այս գաղտնիքները չի կրցան հասկնալ, և նոր բաց-

ուած դուռէն չի կրցան օգտուիլ :

Փիղաղեղփիայի եկեղեցիին եղած Յիսուսի այս վկայութիւնը՝ եկեղեցիին սոյն մեծ յուսախարութեան ենթարկուած ատենին կը վերաբերի և եկեղեցին երկնային սրբարանին սրբութեան սրբոցին առաջնորդուելու համար տրուած է :

3. Անունով քրիստոնեայ ճանչցուող բայց Յիսուսի գալստեան վարդապետութեանը ծաղրողներուն դէմ Յիսուս ի՞նչ կը յայտնէ : — Յայտ. 3. 9 : Բաղդատէ ասիկա Եսա. 66. 5ին հետ : Սըրբարանը հասկնալուն մէջ հաւատացեալներուն ըրած սխալէն օգտուելով Յիսուսի գալստեան վարդապետութիւնը ծաղրել՝ Անոր գալուստը չի կրնար խփանել : Անշուշտ պիտի գայ Յիսուս : Ան ատեն բոլոր կեղծաւոր ծաղրիչները հաւատացեալներուն ոտքերուն տակ երկրպագութիւն պիտի ընեն, և պիտի տեսնեն թէ Աստուած կը սիրէ եղեր զանոնք :

4. Համբերութեան խօսքը պահուներուն Յիսուս ի՞նչ կը խոստանայ : — Յայտ. 3. 10 :

5. Սոյն փորձութեան ժամանակը երբ պիտի գայ : — Յայտ. 13. 11—18 :

Ծանօթ. Յիսուսի երկրորդ գալստեան վարդապետութիւնը ծաղրելով և նոյն վարդապետութիւնը ընդունողները վերջնապէս խոզանաբան եկեղեցիները Աստուծոյ խօսքին սկզբունքներէն բաժնուեցան Աստուծոյ հոգին ալ անոնցմէ քաշուեցաւ : Ձեռքերնին միայն մարդկային աւանդութիւններ մնացին : Տեսան թէ ասոնք պահել տալուն միակ ճամբան՝ Հոռովմէական եկեղիցիին օրինակին հետեւելով՝ քաղաքական իշխանութիւններ ձեռք ձգել և գործածել է, ուստի կառավարութիւններու հետ միանալու ցանկութեան մէջ ինկան : Ասոր մէջ երբ յաջողին, նոյն ուղղութեան մէջ եղող Հոռովմի հետ պիտի միանան : Ան ատեն Հոռովմէական սկզբունքներուն և Աստուծոյ խօսքին սկզբունքներուն միջև մեծ պատերազմ մը երեւան պիտի

ելլէ : Երկրիս վրայ բնակողներուն ամենը փորձուելով, կամ Աստուծոյ կողմը և կամ Հոռովմի կողմը պիտի կենան : Յիսուս կը խոստանայ հաւատացեալները պահել աս փորձութեան ժամէն :

6. Յիսուս իր գալստեանը մասին եկեղեցին ի՞նչպէս կը զգուշացնէ : — Յայտ. 3. 11 :

7. Յաղթողին ի՞նչ կը խոստանայ : — Հմր. 12ին առաջին մասը :

8. Ի՞նչ է Աստուծոյ տաճարը : — Ս. Տիմ. 3. 15 : Եկեղեցին կենդանի Աստուծոյ տաճարն է : Աստուծոյ խօսքը հաստատ բռնողներ՝ Աստուծմէ զատուած եկեղեցիներէն վռնուելով Աստուծոյ տաճարէն արտաքսուած կը կարծուին թէև, բայց անոնք երբ աստուծոյ խօսքը մինչև վերջ հաստատ պահելու ըլլան, Աստուած զանոնք իր տաճարին մէջ սիւն պիտի ընէ, և մէկը

զանոնք անկէ պիտի չի կրնայ հանել :

9. Յաղթողին ուրիշ ի՞նչ կը խոստանայ Յիսուս : — Յայտ. 3. 12ին մնացած մասը :

Ծանօթ. — Երբ բոլոր եկեղեցիներ Հոռովմի սկզբունքներուն միանան, Աստուծոյ խօսքը պահող հաւատացեալներ անոնց կողմէ ամեն տեսակ անարգալից անուններով կը յիշատակուին : Ինչպէս Հերիտիկոս, Սատանային ծառաները, հին ուխտին զաւակները քրիստոնեայ չեն, եւ այլն : Սակայն երբ Յիսուս երկինքէն յայտնուի ինդիրը բոլորովին պիտի փոխուի : Յիսուս պիտի փառաւորէ հաւատացեալները : Անոց վրայ Աստուծոյ անունը, նոր ուխտը նշանակող նոր Երուսաղէմին անունը և իւր անունը պիտի գրէ :

10. Յիսուսի այս վկայութեան, եկեղեցիներ ո՞ր աստիճան կարեւորութիւն տալու են : — Յայտ. 3. 13 :

11. Դաս — Յայտ. 3. 14—22 :

Լ Ա Ի Ո Դ Ի Կ Է Ի Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ի Ե Վ Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ե

«14 — Եւ Լաւոդիկէի մէջ եղած եկեղեցւոյն հրեշտակին գրէ. Այսպէս կ'ըսէ Ամէնը, հաւատարիմ ու ճշմարիտ Վկան, Աստուծոյ արարածներուն Սկիզբը. 15 — Գիտեմ քու գործերդ, որ ոչ պաղ ես ու ոչ տաք. երանի թէ պաղ ըլլայիր կամ տաք : 16 — Ուստի դուն որ գաղջ ես, ու ոչ տաք՝ ոչ ալ պաղ, քեզ բերնէս դուրս փոխելու վրայ եմ. 17 — Քանզի կ'ըսես, Ես հարուստ եմ ու մեծցայ, և բանի մը կարօտ չեմ. ու չես գիտեր որ դուն խեղճ ու թշուառական ես, և աղքատ ու կոյր ու մերկ : 18 — Ես քեզի խորհուրդ կուտամ, ինձմէ կրակի մէջ փորձուած ոսկի ծախու առ, որպէս զի հարստանաս, ու ձերմակ հանդերձներ՝ որպէս հազնիս, որպէս զի քու ամօթալի մերկութիւնդ չերեւնայ. և աչքերուդ դեղ դիր որպէս զի տեսնես : 19 — Ես իմ ամեն սիրածս կը յանդիմանեմ ու կը խրատեմ. ուստի նախանձաւոր եղիր ու ապաշխարէ : 20 — Ահա ես դուր կայներ եմ ու կը զարնեմ. եթէ մէկը իմ ձայնս լսէ ու դուրը բանայ, անոր քով պիտի մտնեմ և անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան ալ ինձի հետ : 21 — Ան որ կը յաղթէ, ինձի հետ իմ աթոռս նստիլ պիտի տամ անոր, ինչպէս ես ալ յաղթեցի ու իմ Հօրս հետ անոր աթոռը նստայ : 22 — Ան որ ահանջ ունի, թող լսէ թէ Հոգին ի՞նչ կ'ըսէ եկեղեցիներուն :»

1. Եարքին մէջ եօթներորդ ու վերջին եկեղեցին ո՞րն է : — Հմր. 14ին առաջին մասը :

Ծանօթ. — Յ. Տ. 1844 Հոկտ. 22ին երբ Փիղաղեղփիայի եկեղեցիին առջև երկնային սրբարանին Սրբութեան Սրբոցի

դուռը բացուեցաւ եկեղեցին նոր շրջա-
նի մը մէջ մտաւ: — Լաւոդիկիա այ-
սինքն ժողովուրդին դատարարը:

2. Աս եկեղեցիին Գրիստոս ինքզինք
ո՞ր քաղաքներով կը ներկայացնէ: —
Հմր. 14ին մնացած մասը: Ինչպէս նա-
խորդ վեց եկեղեցիներուն տրուած վկա-
յութիւններուն մէջ, նոյնպէս այս վեր-
ջինին մէջ Յիսուս ինքզինք սա ան-
կաններով յայտնելը՝ եկեղեցիին ներկայ
վիճակին հետ սերտ յարաբերութիւն ու-
նի: Եկեղեցիին վիճակը ուսումնասիրած
ատեննիս աս յարաբերութիւնը աւելի ո-
րոշ կը տեսնենք:

3. Յիսուսի յայտնած առաջին ան-
կանը ո՞րն է: — Պատ. — «Ամէնը»: Աս
անկանը եկեղեցիին ապահովութիւն կը
ներշնչէ թէ՛ Աստուծոյ խոստումները Յի-
սուսի մէջ անպատճառ պիտի կատար-
ուին: Բ. Կորն. 1.20: Երբ Յ. Տ. 1844
Հոկտ. 22ին Յիսուս չեկաւ պատճառը
այն չէր որ խոստումը յետաձգուած էր:
Աստուած իր խոստումը չի յետաձգեր:
Նոյն թուականէն ասդին, Յիսուս եր-
կինքի մէջ քառութեան վերջին պատ-
նը կատարելու վրայ է: Երբոր այն պաշ-
տօնը լրանայ, Աստուծոյ խոստումը պի-
տի իրագործուի:

4. Յիսուսը ներկայացնող ուրիշ մէկ
անկանը ո՞րն է: Պատ. — «Հաւա-
տարիմ ու ճշմարիտ վկան» Երկինքի մէջ
Յիսուս որքան որ իր ժողովուրդին հա-
մար կայնող իշխան մըն է, անոր մասին
բնաւ սուտ չի կրնար խօսիլ: Քննու-
թեան ժամանակ Յիսուս՝ Հօրը և հրեշ-
տակներուն առջեւ իր ժողովուրդը դա-
ւանելու համար՝ իր ժողովուրդն ալ ճիշտ
այնպիսի յարմար վիճակի մը մէջ գըտ-
նուելու է: Ասոր համար Յիսուս եկեղե-
ցիին վիճակը հիմա յայտնելով զանհիկա
ապաշխարութեան կը հրաւիրէ:

5. Յիսուսը ներկայացնող երրորդ
մէկ անկանը ո՞րն է: — Պատ. — Յի-
սուս Աստուծոյ արարածներուն Սկիզբն է:
Եթէ եկեղեցին Աստուծոյ արարածը պի-

տի ըլլայ, ամէն բան Յիսուսէ պիտի
տրուի անոր: Տրուելիք բաները Յիսուս
գիտէ, և եկեղեցին հաւատալու է թէ
Ան գիտէ և ան բաները անկէ առնելու
է: Եթէ ոչ եկեղեցին Աստուծոյ արա-
րածը ըլլալէն կը դադրի:

6. Յիսուս եկեղեցիին ներկայ վի-
ճակը ինչպէս կ'իմացնէ: — Յայտ. 3.
15ին առաջին մասը:

7. Աս վիճակին անընդունելի ըլլա-
լը ինչպէս կը յայտնէ: — Հմր. 15ին
վերջին մասը:

8. Գաղջ վիճակի մէջ մնալուն վը-
տանգը ինչպէս կը յայտնէ: — Հմր. 16:

9. Աս գաղջ վիճակին պատճառը
ինչպէս կը բացատրէ: — Հմր. 17ին ա-
ռաջին մասը: — Եկեղեցին իր մասին
«ես հարուստ եմ ու մեծցայ, և բանի
մը կարօտ չեմ» կ'ըսէ:

10. Եկեղեցիին իրական վիճակը Յի-
սուս ինչպէս կը հասկցնէ: — 17ին վեր-
ջին մասը:

Ծանօթ. — Ինչ որ եկեղեցին հարս-
տութիւն կը սեպէ՝ Յիսուս բնաւ չի սե-
պեր: Եկեղեցին ինչ ինչ բաներու է տի-
րացեր, բայց անոնք Յիսուսէն տրուած
չըլլալով, եկեղեցին Աստուծոյ արարածը
ընելու մէջ անարժէք են:

11. Իրմէն եկեղեցիին տրուելիք բա-
ները Յիսուս ինչպէս կը թուէ: — Հմր. 18

ԿՐԱԿԻ ՄԷՋ ՓՈՐՁՈՒԱԾ ՈՍԿԻ

12. Պետրոս առաքեալ ո՞ր բանին
փորձուիլը կը խօսի: — Ա. Պետ. 1. 7:
Հաւատքն է որ կրակով կը փորձուի,
և ասոր հաւաստիք փորձուիլը կ'ըսէ:

13. Հաւատքը ո՞ր կրակով կը փոր-
ձուի: — Ա. Պետ. 1. 6: Յակ. 1.2, 3:
Ա. Պետ. 4. 12: «Չանաղան փորձու-
թիւններով:»

14. Հաւատքին հիմը ինչ է: Բ.
Կորն. 1.9: մեռելները յարուցանող Աս-
տուծոյ վստահիլ:

15. Աս հաւատքին հիմ ըլլալու հա-
մար Աստուած ո՞ր իրողութիւնը կը ներ-

կայացնէ: — Բ. Կորն. 4. 14: Տէր Յի-
սուսի մեռելներէն յարութիւն առնելը
կը ներկայացնէ:

16. Յիսուս ինչո՞ւ համար մեռաւ և
որո՞նց ձեռքով սպանուեցաւ: — Ա.
Կորն. 15.3: Երբ. 12.3:

17. Մեղաւորներ Յիսուսը ինչո՞ւ ա-
տեցին: — Յովհ. 7.7:

Ծանօթ. — Յիսուս աշխարհի գործե-
րուն չար ըլլալը վկայելուն համար՝ մե-
ղաւորներ Ասոր դէմ ելլելով զանհիկա ըս-
պանեցին:

18. Աստուած Յիսուսը մահուան մէջ
թողո՞ւց: — Գոր. 2.23, 24:

19. Յիսուսի վստահութիւնը ինչ էր:
— Գոր. 2.25-28:

Ծանօթ. — Յիսուսի աս վստահու-
թիւնը կրակի մէջ փորձուած ոսկի ըլլա-
լով, զանհիկա կուտայ այն ամենուն որ
կը հաւատան թէ ինք մեռելներէն յա-
րութիւն առած է: Աս վստահութեան
տիրացողներ Յիսուսի կողմը կենալով՝
աշխարհիս գործերուն չար ըլլալը կը
վկայեն և անձերնին Յիսուսի քաջած
չարչարանքներուն ենթարկելով մինչև
իսկ մահուան կը յանձնեն ու գիտեն թէ
ամօթով պիտի չելլեն: Որովհետև, Յի-
սուսը մեռելներէն յարուցանողը՝ զիրենք
ալ Յիսուսի միջոցով յարուցանելով փա-
ռաւոր պիտի ցուցնէ: Աս վստահութիւնը
Յիսուսի շնորհած ճշմարիտ հարստու-
թիւնն է:

—

19. Դաս — Յ. 14 — 22:

ԼԱԻՈՂԻԿԵԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԿՎԱՅՈՒԹԻՆ

(Նարուակոթիւն)

ՃԵՐՄԱԿ ՀԱՆԴԵՐՁ

1. Մեր ամօթալի մերկութիւնը չե-
րեւնալու համար Յիսուս իրմէն ինչ
ծախու առնելուն խորհուրդ կուտայ:
— Յայտ. 3. 18ին միջին մասը:

2. Ճերմակ հանդերձը ինչ է: — Չաք.
3. 3, 7: Ճերմակ հանդերձ՝ Տէրջը
ճամբաներուն մէջ քալելուն և պատուի-

րանքները պահելուն արդարութիւնն է:
Առանց Գրիստոսի մարդ աս արդարու-
թեան զուրկ և ամբարշտութիւնով լե-
ցուն է: Աս վիճակը ամօթալի մերկու-
թիւն կ'անուանուի:

3. Ճերմակ հանդերձը մեզի ինչպէս
կը տրուի: — Հոովմ. 4. 20-25: 10.
9, 10: Սրտանց հաւատալով թէ Աստ-
ուած Տէր Յիսուսը մեռելներէն յարոյց:
Աս հաւատքը մեզի արդարութիւն կը
սեպուի: Ճերմակ հանդերձը՝ Յիսուսի
ձեռքով մեզի կը հազցուի, և Աստուծոյ
ճամբաներուն մէջ քալողներ կ'ըլլանք:

Գ Ե Ղ

4. Տեսնելու համար ինչ պէտք է
կ'ըսէ Յիսուս: — Յայտ. 3. 18ին վեր-
ջին մասը:

5. Աչքերը լուսաւորող դեղը ո՞րն
— Եփես. 1. 17, 18:

6. Աս հոգին մեզի ինչ կերպով կը
տրուի: — Եփես. 1. 13: Յիսուսի հա-
ւատացողները Աստուած Ս. Հոգիով
կը կնքէ:

Ահա եկեղեցին ճշմարտապէս հարուստ
ու մեծ և Աստուծոյ առջև հաճելի ու
կենդանի տաճար ընող բաները ասոնք են:

7. Եկեղեցիին հանդէպ ունեցած
սէրը Յիսուս ինչպէս կը յայտնէ: — Յայտ.
3. 19ին առաջին մասը:

8. Եկեղեցին ինչ բանի կը հրաւիրէ:
— Հմր. 19ին վերջին մասը:

Ծանօթ. — Երբ եկեղեցին իր մէջ
գտնուած բայց Յիսուսէն չառած բաները
հարստութիւն սեպելէն հրաժարի և Յի-
սուսի խորհուրդ տուած բաները Անկէ
առնելու դառնայ ան ատեն ասիկա ա-
պաշխարութիւն կ'ըլլայ:

9. Յիսուս ինչպէս կը թախանձէ որ-
պէսզի իր մեզի տալիք օրհնութիւնները
առնենք: — Հմր. 20ին առաջին մասը:

10. Երբ ընդունինք՝ մեզի ինչ ընել
կ'իմացնէ: — Հմր. 20ին վերջին մասը:
Իրեն մեզի հետ և մեր ալ իրեն հետ
ընթրիք ընելնիս կ'իմացնէ:

11. Լաւոդիկիայի եկեղեցին՝ Փիղաղեղփիայի եկեղեցիին առջև դրուած բաց դուռին միջոցով կազմուած ըլլալով հանդերձ, ինչպէս ասանկ գաղջ վիճակի մը կրնայ ենթարկուիլ:

Պատ. — Փիղաղեղփիայի եկեղեցին այն մեծ յուսախաբութեան վրայ երբ երկնային սրբարանէն եկած Սրբութիւն սրբոցի լոյսը առաւ, հաւատքի մէջ հաստատուն եղող հաւատացեալներ այս լոյսը ուրիշներու հաղորդել սկսան անմիջապէս: Աստուած անոնց սրբարանէն օգնելով, Աստուծոյ օրէնքին և Յիսուսի հաւատքի մասին շատ լոյս շնորհեց անոնց: Անոնք շաբաթ օրը պահելու և Յայտ. 14. 9-12ի երրորդ հրեշտակին պատգամը տարածելու սկսան: Աս փառաւոր սկզբունքներուն վրայ կազմուեցաւ Լաւոդիկիայի եկեղեցին, ու հետը հետէ յաջողութիւն գտնելով, ինչպէս այսօր է՝ աշխարհիս ծայրերը հասաւ: Աշխարհի ասպարէզին մէջ տէր եղաւ մեծ դպրոցներու, հիւանդանոցներու, տպարաններու, կանոնաւոր վարչութիւններու, և տետրակի ընդարձակ ընկերութեան: Կ'երեւի թէ այս արտաքին յաջողութիւններուն և ձեռք ձգած բաներուն նայելով՝ եկեղեցին Յիսուսի հետ ունեցած իր յարաբերութեանը մէջ տկա-

րացաւ: Ինքզինք հարուստ ու մեծ կարծելով Յիսուսէն եկած հոգեւոր կեանքը թողուց:

Եկեղեցիին բուն կեանքը՝ հաւատք ու արդարութիւն և Ս. Հոգին է, անոնք աս բաները Յիսուսէն առնելու մասին թոյլ վարուեցան և յոյսերնին արտաքին բաներու վրայ դրին: Բուն ճշմարտութիւնը՝ Անոր շնորհած արտաքին օրհնութիւններուն հետ փոխանակեցին: Աս կերպով եկեղեցին գաղջ վիճակի մը մէջ ինկաւ: Յիսուսի յանդիմանական ու խրատական խօսքերը եկեղեցին կ'արթնցնէ, և Աստուծոյ առջև գովելի վիճակի մը հասցնելու համար աղղեցիկ միջոց մըն է:

12. Յիսուսի վկայութիւնը եկեղեցիին մէջ ինչպիսի արդիւնք մը առաջ պիտի բերէ: — Յայտ. 14. 12: Ասանկ կատարեալ ժողովուրդ մը պիտի պատրաստէ: Աս ըսել է թէ՝ եկեղեցին Աստուծոյ յանդիմանութիւններուն անսալով՝ գաղջ վիճակէն պիտի ազատի, և Յիսուսէն ծախու առնուած բաներով ինքզինք պիտի զարդարէ:

13. Յաղթողին Յիսուս ինչ կը խոստանայ: — Յայտ. 3. 21:

14. Աս վկայութեան օր աստիճանի կարեւորութիւն տալու ենք: — Հմր. 22:





3244

« Ազգային գրադարան »



NL0030257

